


ԴՐՈՇՆԿ



„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Ա Բ Ր Օ

Աբրօի մասին մի քանի կենսագրական տեղեկութիւններ տւինք («Իրօչակի») անցեալ համարում:

Զարգած, թալանւած, յուսահատ եղած ժողովրդի մէջ ապրող, նրա բոլոր գրկանքներին մասնակից, նրա ցաւերով տանջւող, նրա վիրաւոր սիրտը սիրտիող, յոյս աւող եւ վրէժխնդրութեան կրակը վառող Աբրօի կորուստը աւելի քան զգալի է թէ՛ Սասնոյ ժողովրդի եւ թէ՛ իր վշտացեալ ընկերների համար: Դիւրին չէր թողնել քաղաքային կեանքի բոլոր յարմարութիւնները, թողնել իր բոլոր սովորութիւնները, հագնել զիւղական զգեստ, առնել ձեռքը գաւազան եւ թափառել զիւղէ՛ զիւղ, սարէ սար, արհամարհելով քաղցը, ցուրտը, ամեն տեսակ անյարմարութիւններ, ամեն տեսակ վտանգ...

Աբրօն, որի իղէալն էր «կարմիր յեղափոխական» դառնալ, այդ բոլորը կատարեց. նա մտացաւ իր անձնաւորութիւնը, ձուլեց հասարակ ժողովրդի մէջ եւ իր ամբողջ էութեամբ անձնատուր եղաւ իր ստանձնած առաքելութեան Յաճախ նա հիւանդանում էր՝ նրա մարմինը անկարող էր լինում տանել այս բոլոր գրկանքները, բայց դեռ կիսակազդուրւած նա անմիջապէս նետուում էր նորից իր սիրեցեալ ասպարէզը:

Աբրօի վերջին նամակները լիքն են ժողովրդի բազմատեսակ թշուառութիւնների, կառավարչական հալածանքների եւ քրտական պատրաստութիւնների նկարագրութիւններով:

Ուրիշ ելք չգտնելով այդ թշուառութիւններին վերջ

տալու, բացի նոր շարժումներ առաջ բերելուց, Աբրօն ամեն տեսակ ճիգ էր թափում օր առաջ իրագործել իր մտադրութիւնները: Այդ նպատակով նա անընդհատ պրտտում էր կիսաւէր երկրում, ուսումնասիրելով դրա դիրքը: մի քանի անգամ անցաւ Մուշից Սասուն, Սասունից Մուշ, ամեն տեղ քարոզում էր, ուժեր համախմբում եւ ձգտում, կապեր հաստատելով, օգտուել երկրի մէջ գոյութիւն ունեցող բոլոր տարրերից:

Բայց նա անկարող եղաւ տանել մինչեւ վերջը իր տարիների ընթացքում փայտայած մտադրութիւնները. հենց

այս պատրաստութիւնների ժամանակ, Սասնոյ ձիւնապատ լեռներն անցնելիս, Աբրօն թաղւեցաւ ձիւնակոյտի տակ իր մի ընկերոջ հետ միասին:

Գանի որ Տաճկահայաստանում վերջին սոսկալի կոտորածներից յետոյ ժողովրդի սրտում տիրում է դեռ վիստութեան ոգին, քանի որ նա չչմած իր ստացած հարւածներից, շարած գրութեան մէջ, դեռ չգիտէ իր անելիքը, Աբրօի նման համոզւած, փորձւած, ժողովրդի լեզուն ու ոգին հասկացող յեղափոխականներն աւելի քան անհրաժեշտ են ներկայ դառը եւ ծանր բուլքներում:

Նա չհասաւ իր նպատակին, զրկւեց իր տեսչալի ցանկութիւնից «ընկնել հրացանը ձեռքին», ինչ-

պէս նա երազում էր իր կեանքի վերջին տարիներում:

Աբրօն իջաւ յեղափոխական ասպարէզից, իր սրբազան պարտքը կատարելու պատրաստութիւնների ժամանակ: Աբրօի վշտացեալ ընկերներին է մնում մինչեւ վերջը տանել նրա սկսած ծրագիրը եւ առաջ մղել ընդհանուր սրբազան կռիւր:



Ա Բ Ր Օ
(ՄԿՐՏԻՉ ՄԱՆՆԵՐՆԻ)

Վ Ա Ն

Կ Ռ Ի Ի Յ Ա Ռ Ա Ջ

(ՊԵՏՕՅՈՒ ԳՐԱԾ)

28/9-ին մայիս 96 թ.

Կառավարութիւնը սկսել է մայիս 17-ից մի շարք խուզարկութիւններ, որոնք թաղային բնակչութիւն ունեն: 17-ի գիշերը շրջապատեցին Տաճիկ-Աճէմեան փողոցը 300 զօրքով: Ըղթայի մէջ կային 70 տուն: 6 զինւորներ շեփորները ձեռքերին՝ կանգնած էին զանազան յարմար կէտերի վայր, որ ի հարկին օգնութիւն կանչեն զօրանոցից և պահականոցներից: Լուսաբացին սկսեց կատաղի խուզարկութիւնը: Ներկայ էին բինբաշին, սարկօմիսէրը և փօլիսների մի ամբողջ նախիր: Թաղի մէջ գտնուած մի քանի հայրուկներ կարողանում են խոյս տալ: Զինւորները կամ չեն նկատում, կամ նկատում են, բայց խոհեմութիւն են համարում ձայն չհանել: Խուզարկեցին 25 տուն, բայց ոչինչ չգտան:

Նոյն ձևով խուզարկեցան Չալղին նորաշէնը և այլն...

Առանձին խտուածքով խուզարկեցաւ Թօթլուղ փողոցը, մանաւանդ **ՏԻԳՐԱՆ** անունով երիտասարդի տունը: 100-ի չափ զինւորներ թափուած են այդ փոքրիկ տան վայր ժամը 6-ին, գիշերը: Տիգրանը բացակայ է լինում, տանը լինում են նրա մայրը, երկու քոյրերը և 7 տարեկան փոքրիկ եղբայրը:

Զինւորները երկու ժամ շարունակ խուզարկում են խստիւ տունը և ոչինչ չգտնելով, սկսում են քանդել ամեն ինչ՝ զէնքի պահեստ գտնելու համար: Ընտրի այդ գունդը օրիորդի և մօր հետ անպատկան կերպով են վարուում և վերջ ի վերջոյ ըսկսում են ծեծել նրանց: Օրիորդը ցտց է տալիս կատաղի ընդդիմադրութիւն: Փոլիս Յակոբ էֆ. ծեծելով՝ աշխատում է օրիորդին խուզարկել և նրան յաջողւում է գրպաններից հանել երկու կասկածաւոր տոմսակներ: Այդ տոմսակների առիթով նրան ցանկանում են ձերբակալել, մեղադրելով նրան Վանայ Դաշնակցական կօմիտէին մասնակցելը: Օրիորդ **ԶԱՐՈՒՅԻՆ** ընդդիմադրուում է: Դրուածիւնն անորոշ է:

**

Կ Ռ Ի Ի Յ Յ Ե Տ Ո Յ

(Վ Ա Ջ Գ Ն Ն Դ Գ Ր Ա Ծ)

26/8-ին յունիս 96 թ.

Մօտ չորս շաբաթ կը լինի, որ մեր գլուխները խառնուած է ու մեր յարաբերութիւնները խանգարուած:

Վանի սոսկալի կռիւը սկսեց յունիս 3-ին, երկուշաբթի օրը ժամը 4-ին (ը. թ.) ժտերը և շարունակեցաւ մինչև 12 օր, դեռ կը շարունակուի գաւառներու մէջ: Մեր դիմադրութեան շնորհիւ կոտորածը գրեթէ դադարեցաւ քաղաքի Այգեստան մասի մէջ: Կառավարութիւնն է գործող մեր դէմ: Առաջին օրեր խուժանի միջոցով և զօրքերու գաղտնի մասնակցութեամբ, իսկ յունիս 5-էն մինչև ութը յայտնի կերպով:

Կառավարութիւնը անգլիական հիւպատոսի միջոցով յունիս 7-ին պահանջեց անձնատուր լինել, զէնքեր, դիրքեր և գլխաւորներ յանձնել: Մենք թէև բացասական պատասխան չուէինք, բայց ժամանակ պահանջեցինք: Միւս օր, յունիս 8-ին, արշալոյսին սկսեց թնդանօթներով ուժակոծել Այգեստանը. համարիականներ արդէն անհամար լեցած էին: Կանոնաւոր զօրք և մահմեդական խուժանն ալ միւս կողմէն:

Այդ բոլորը մեզ երբէք վհատութիւն չպատճառեցին. կատաղի կերպով դիմադրեցինք մինչև երեկոյ: Այդ օր մինակ երկու զոհ տուինք մեզմէ, իսկ թշնամուց երկուհարիւրէ աւելի: Մեր դիրքերը հետզհետէ մեր ձեռքէն ելնելով, երեկոյեան մութին քաշեցանք լեռը: Յաջորդ երկու օրեր կառավարութիւնը այրեց չորսհարիւրէ աւելի տներ, քիւրդերն ալ թալանեցին ուղածնուն պէս:

Կոտորածի ճիշտ հաշիւը չկայ տակաւին: Այգեստանի մէջ հայերու և թշնամիներու կորուստը կը կարծուի լինել դէմ առ դէմ 3-400, իսկ գաւառները անպատմելի կերպով կոտորուած են: Ոչ մէկ դիւլ աղատ մնացած է, ինչպէս կը լսուի:

Լեռ քաշելէն 10 օր վերջ Պետօն մեծ խումբ մը հայրուկներով մեկնեցաւ դէպի տակաւին ոչ մի լուր: Դուռանն ալ բացակայ է, անոր ալ կսպասէինք:

**

ԿՐԻԻ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆԸ

26/8-ին յունիս 96 թ.

Թրքական բարբարոս կառավարութիւնը վաղուց հետամուտ էր կոտորած գործել և Վանում, որ հայաշատ նշանաւոր կեդրոններից մէկն է: Սուլթանական յանձնաժողովը Վան մտնելէն վերջ ամեն կերպով աշխատեց գրգռել ու մահմեդական խուժանը պատրաստել հայ ժողովուրդը կոտորելու համար: Նենգաւոր կառավարութիւնը, որպէսզի առիթ գտնէր հայերին կոտորելու, սկսաւ ամենախիստ խուզարկութիւններ անել՝ յուսալով ձեռք ձգել յեղափոխականներին և այդ առիթով կոտորել հայերը: Այդ խուզարկութեանց ատեն ձերբակալեցաւ օրիորդ Զարուհի Տերոյեան, իբրև դաշնակցական, որին ամեն կերպով կաշխատեն:

խոստովանեցնել որպէսզի ցոյց տայ իրենց տան միջի զէնքի պահեստը, »Դաշնակցութեան Թուուցիկ թերթի« տպարանը, որոշ անձնաւորութիւններին:

Սուլթանական յանձնաժողովն իմացած էր, որ խմբեր էին դուրս ուղարկւած զէնք տեղափոխելու. յարմար առնն էր գործ սկսելու, ջանֆէրայիները հեռացած էին:

Տաճիկ խուժանը պատրաստ էր արդէն: Յունիս 1-էն շուկան իսպառ գոց էր: Յունիս 2-ի գիշեր գիշերապահ զօրքեր Այգեստանի մօտ դաշտի մէջ ընդհարում ունեցան խումբ մը հայերու հետ, երկու զինուոր սպանւեցաւ և մէկ միլազիմ վերաւորեցաւ. օգնութեան գալարափողը հնչեց և ամեն կողմէն փութացին վտանգի տեղը օգնութեան հասնել: Լոյսը բացելուն ամեն ինչ վերջացած էր: Զինուորներու դիակները տարան Թաղ փողոց և դրին ի ցոյց տաճիկ խուժանին, զայն աւելի ևս գրգռելու նպատակաւ:

Յունիս 3-ի, ցերեկւան ժամը 4-ին առններ սկսաւ կռիւր: Տաճիկներ սկսեցին փողոցներում պատահած հային սպաննել. հրացանի ամեն բոմբին կարծես կեանք էր վերջացնում: Այն հայ թաղերը, որ գտնուում էին տաճիկաց թաղերի մէջ, անմիջապէս կոխւեցան. անգութ գազանները ս ա լ ա լ ա թ կ ա ն չ է լ ո վ թ ա լ ն ու մ էին, կոտորում էին առհասարակ արու մարդկանց ու երեխաներին, չքանդում էին տները կամ այրում. Կլոր դար, Հայկազանք Թորոմանի թաղ, Ս. Յակոբի թաղ այդ օրը բոլորը կոտորեցան առանց դիմադրութեան: Տիրեց ընդհանուր արհաւիրք, փողոցները դատարկեցան, տները փակեցան, ամեն մարդ իրեն յուսալով, իր զէնքը պատրաստեց. հայ յեղափոխական կուսակցութիւնները բաց թողնելով իրենց կուսակցական ոգին՝ եղբայրաբար ձեռք ձեռքի տւած՝ պաշտպանեցին ժողովուրդը, պաշտպանեցին հայրենիքը: »Դաշնակցութիւնը« իր զինուորներով և լաւ զէնքերով շատ ոյժ տւեց գործին: Բոլոր կարևոր տեղերը՝ ուրկէ տաճիկները կարող էին մուտ գործել հայ թաղերը, մարտական դիրք ընտրեցին հայ քաղերը և կատարի կերպով կռիւ մղեցին մահադականների դէմ: Դաշնակցականների, հնչակեանների և արմէնականների պարագլուխները իրենց ընկերներով շրջում էին ռազմական դիրքերը, խրախուսում ու կուռում էին քաջաբար:

Մարտական նշանաւոր ամրոցներն էին՝ հիւսիսային կողմում Շան թաղ, ուր տների պատերը ծակելով՝ դիրքեր շինած էին, հարաւային կողմում՝ Թիւթիւնձեանների տուն, Արիձեանների թաղ, Նախրի փողոց և այլն: Արևմտեան կողմ՝ Սահակ-պէկեց տուն և այլն:

Նշանաւոր կռիւներ եղան նախ Թիւթիւնձեանց տան վրայ, Նախրի փողոց և մանաւանդ Շան թաղ, ուր ամբողջ 6 օր կռիւ տւին մեր քաղերը գիշեր ցերեկ և բողջ 6 օր կռիւ տւին մեր քաղերը գիշեր ցերեկ և շարունակ ետ մղեցին անարգ թշնամուն: Կառավարութիւնն առաջին օրերը ծածուկ մասնակցում էր, իսկ

վերջին օրերն այլևս յայտնի կերպով սկսեց գործել. մեր կռիւը կանոնաւոր զօրքի դէմ էր, որի հետ խառն էին և քիւրդ ու թիւրք խուժանը: Հայ հերոսները կրակ կտրած, երգելով կուռում էին և ետ քշում թշնամուն: Թշնամու փախուստը և նրանց արիւնշաղան դիակները նոր կեանք, նոր աւուր էին ներշնչում մեր կարիճներին և նոքա կեցցէներով յաղթութիւն աւետելով մէկմէկու՝ կուռում էին: Այդ 5-7 օր հայաբնակ Այգեստան ազատ էր, բոլորովին ազատ. տաճիկական իշխանութեան հետքն անգամ չկար, տաճիկ չէր երևում. հայ զինուորներն էին, որ ուրախ, զւարթ, ոգևորւած օգնութեան էին շտապում այս ու այն դիրքին: Թողովուրդը փառաւորում և օրհնում էր իր քաղերին... Ախ, նրանց հոգուն մատաղ, ինչպէս քաջ մարտնչում էին նրանք, ինչպէս սարսափ էին ազդում ահագին թշնամուն, ամեն ոք վազում էր դէպի կռիւ, դէպի մահ՝ — մահը նրանց համար անմահութիւն էր...

Ստոր տաճիկ կառավարութիւնը նկատելով, որ չքկրնար նւաճել քաղաքի հայերը, դիմեց անգլիական հիւպատոսին և ամերիկացի միսսիօնար Քէյնօլսին, որ անոնց միջոցով կարգադրէ գործը: Անգլիական դեսպանը ներկայացաւ մեզ իբրև լիազօր ներկայացուցիչ վեց պետութեանց կողմէն. հայերը մերժեցին ի հարկէ այդ անամօթ մարդուն և պահանջեցին, որ Ռուսաց ու պարսից հիւպատոսներն ալ ներկայ լինին:

Յունիսի 3-ի ցերեկը, ժամ 8-ի միջոցները պաշտօնական տեսակցութիւն կատարեցաւ, ուր Անգլիական հիւպատոս և մութըր Քէյնօլս կը պահանջէին հայերէն անձնատուր լինել նշանաւոր դիրքեր և զէնքեր յանձնել, 10 հոգի ալ իբրև գլխաւոր՝ յանձնել կառավարութեան, որպէսզի կռիւը դադարի, հակառակ պարագային կառավարութիւնը պիտի ուձակոծէ ամբողջ Այգեստան: Ռուսաց փոխ-հիւպատոս չեզոքութիւն ցոյց տուաւ, իսկ պարսից հիւպատոս շատ նպաստաւոր խօսեց հայերին նկատմամբ և մեր իրաւունքները պաշտպանեց ամեն կերպով: Մեր առաջնորդ Սահակ վարդապետն ալ ներկայ էր այդ բանակցութեան: Մերոնք թէև բացասական պատասխան չուէին, բայց քանի մը օր ժամանակ պահանջեցին, առարկելով, որ կառավարութիւնը թող իր պահանջները ներկայացնէ դրաւոր և մենք պատասխանենք:

Յաջորդ օրը շաբաթ էր, առաւօտից սկսեց թնդանօթաձգութիւնը: Կռիւրը կատարի էր: Կանոնաւոր զօրք, ահագին ռազմամթերք, 7-8 թնդանօթներ ափ մը առիւծների դէմ: Մեր հերոսները կուլեցան անվեհեր, բայց կամաց-կամաց թշնամին մեզ հանել սկսեց մեր դիրքէն, ուձակոծելով ու քարուքանդ անելով զանոնք. տունները փլչում, այրւում էին թշնամու ձեռքէն, սակայն մեր հերոսները շարունակում էին իրենց կռիւը, փոխելով գետին թշնամու դիակները. այնչափ նեղը դրին թշնամուն մեր զինուորները, որ նրանք թո-

ղին թնդանօթ ու փախան: Ափսոս, մեր ոյժերը համեմատաբար շատ պակաս էին: Այդեստանի փողոցի ծառերի մեծ մասը կտրուեցան, որպէսզի թշնամին չյաջողի ապաստանել անոնց ետևը: Հայ ընտանիքներ և անզէն մարդիկ ապաւինեցան դեսպանների տներ, իսկ կուրը չգաղղրեցաւ մինչև իրիկուն: Հայ ղինւորները երգում էին՝

»Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի, որ իւր ազգի
Ազատութեան կը զոհուի:»

Մինչև իրիկուն կուեցին նրանք և փառաւորեցին յեղափոխութիւնը: Նոյն օրը մինչև իրիկուն կուող հայերից միայն 2 զոհ տւինք, իսկ թշնամու կողմէն ընկան 200-էն աւելի:

Գիշերի մութին մենք սարը բարձրացանք: Այդեստանում վնասուեցաւ միայն Անկուաների թաղը, ուր կըլուում էին մեր քաղերը. միւս մասը ազատ մնաց: Գաւառները բոլորը քարուքանդ եղած են...

Մեր գործը սուրբ է, մենք անընկճելի, յեղափոխութիւնը յաղթող է միշտ:

Ազատութիւն կամ մահ, ահա հայի միակ նշանաբանը: Թող ծխան Հայաստանի աւերակները, մենք կը շարունակենք մեր գործը, մենք անվեհեր կը տանենք մեր խաչը: Կեցցէ՛ Յեղափոխութիւն,
Կեցցեն Աւնի կտրիճները:

* *

Վ Ա Ս Պ Ո Ւ Ր Ա Կ Ա Ն

(ՊԵՏՕՅՆ ԳՐԱԾ)

7/19-ին մայիս 96 թ.)

.....Մեր հայդուկները ցրած էին մօտակայ գիւղերը պաշտպանելու. այդ գիւղերին քիւրդը երկիւղից չմօտեցաւ. կառավարութիւնը հոտ առնելով՝ ուզեց խորամանկութեամբ դուրս հանել: Մայիս 2-ի գիշերը մի խումբ ոստիկան քրդի ձեռի տակ վրայ տւեց Կարմրաւոր վանքին. այնտեղի մեր միակ հայդուկը անմիջապէս դիմադրեց: Հրացանի ձայնից թուան Շուշանց գիւղի մեր հայդուկները և աւազակներին մութ, անձրև գիշերը առան իրենց մէջ: Ոստիկաններն անմիջապէս փախան: Մերոնք դարձան իրենց տեղը, գիւղացւոց պաղատանքով: 3-ի գիշերը նոյն գիւղը շրջապատեցին 200 զինւոր երկու ջորաբեռ ուղղամթերքով մերոնց բռնելու. չյաջողեցան: 4-ին նոյն գիւղից 1/4 ժամ հեռի, բլուրների մէջ մեր Թամոյին երկու ընկերով յանկարծակի բերին մի խումբ սուլթաններ (Տեճեւազօրք). մերոնք շուտով գլխի ընկնելով, դիրք են բռնում և հազիւ 20 փամփուշտ զրկած թշնամուն, այդ հաւատարիմները փախչում են: Տեղը Վանից 1 1/4 ժամ հեռի է. լուում էին հրացանների ձայնները...

(Շարունակութիւնը մեր ձեռքը չէ հասել):

* *

(ՊԵՏՕՅՆ ԳՐԱԾ)

28/10 մայիս 96 թ.

Ամբողջ Վասպուրականը մայիսի սկզբից նորից մտաւ յուղման շրջանի մէջ: Գրեթէ ամեն օր, առանց լացառութեան, խուզարկութիւնների գէպքեր, սպանութիւններ տեղի են ունենում: Արձէշից մեր նոր վերադարձած ընկերը պատմում է, որ յայտնի է մին փաշայի հայր՝ Հասան աղան մի խումբ համիդիէներ է զրկում Խաչերով գիւղի վրայ, որոնք մի քաջ երիտասարդ սպանելուց յետոյ, յաջողում են մնացած հայերին ցիւրուցան անել. Հասանի դիտաւորութիւնն է այդ գեղեցիկ հողում քիւրդեր բնակեցնել: Քիւրդերը դարձեալ յարձակում են Յարութիւն գիւղի վրայ, ուր սպանում են դարձեալ մի հայ: Մի Գարման գիւղացի իր եզներով կորսեց դաշտում, քաղաքի մօտ սպանեց Հայոց-Չորի Բերդակ գիւղից մի հայ: Կարճ ամեն տեղ նահանգի մէջ քիւրդերն ու թիւրքերը 95 թւի աշնան ոգևորութեամբ շարունակում են անտանելի անկարգութիւնները:

Այժմ ամենիցս ուշադրութիւնը գրաւած է նոր ձեռի ստեղծի խուզարկութիւնը: Երևի դա Աւնի նոր մատնիչների հանձարն է: Էլ ի՞նչ երևի, իսկ և իսկ հայ մատնիչների գործն է: Անշուշտ արագ կերպով դրանց հետ հաշիւը կը մաքրենք: Ծանր խուզարկութիւններ տեղի ունեցան Հայոց-Չորի Բերդակ գիւղում Կուրուպաշում, Վարագ վանք, Շուշանց գիւղ, Վարագ լեռ, Կողբանց գիւղ և այլն: 300-400 զօրքով շրջապատում են ամբողջ գիւղը կէս գիշերին և լուսաբացին սկսում խուզարկութիւն, հայ գիւղացու մօտ մնացածն էլ լափելով ու գողանալով: Այս նոր ձեռի խուզարկութեան նպատակն այն է, որ գիւղերում կամ քաղաքում հայդուկներին կարողանան ձերբակալել: Բայց այդ սուլթանի բերնից հեռու է: Մինչև այժմ դեռ չէ յաջողած: Փակագծի մէջ ասենք, որ պատահած տեղն էլ միջոց են տալիս հայդուկին դուրս գալու շրջալից իրենց վախից Կառավարութիւնը մի բանով օգտուում է, դա այն է, որ ժողովուրդը ստեղծի խուզարկութիւնների պատճառով ընկած է սարսափի մէջ: Այս ընթացքով յեղափոխականների դիւրութիւնները պակասում են, բայց հոգ չէ:

Ձ Ի Ն Ի Ա Ծ Ը Ն Գ Ի Ի Մ Ա Գ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

Եւրոպան նոր չպէտք է ճանաչի թիւրքաց կառավարութիւնը. հայկական սարսափները միայն մի նոր երես էին սուլթանների բռնութեան երկար պատմութեան մէջ՝ գրած բազմաթիւ ժողովուրդների արիւն արտասուքով: Սուլթանների սանձարձակ կամայականութիւնների մատնած երկրներում, որոնցից մէկն է Հայաստանը, թագաւորում է կատարեալ անապահովութիւն կեանքի, գոյքի ու իրաւունքի և խրախուսում է մոլի բարբարոսութիւնը. այդ պայմաններում ոչ մի աշխարհ:

տաւոր ժողովրդի համար չի կարող ծագել ազատ կեանքի արշալոյս, որին վախագում է և հայ ժողովուրդը:

Քաղաքակիրթ աշխարհն—իմանալով հանդերձ, որ հայ ժողովրդի ցանկացածը հեռու է շօյնիստական գոյնից, որ նա ձգտում է այնպիսի կարգերի, որոնք հաւասարապէս նոյն երկրի բոլոր խաղաղ ժողովուրդներին համար բարօրութեան հիմք պէտք է լինին—ոչ միայն ոչ մի դրական միջոցի չգիտեց՝ ազատելու համար հայերին սոսկալի բռնութիւնից, այլև իր անտարբերութեամբ խրատուսեց եւրոպական խեղկատակ դիպլոմատիայի ամարդ ընթացքը ամբողջ արևելեան հարցում ընդհանրապէս և հայկական խնդրի մէջ մասնաւորապէս: Այդ դիպլոմատիան ասիական բարբարոս բռնակալի խայտառակ ծաղրին ենթարկեց եւրոպական քաղաքակրթութիւնը: Իր ոճրագործ թաթով ստորագրելով Հայաստանի բէֆօրմների ծրագիրը և ստանալով իր բարեկամ ցարից թոյլտուութիւն երբէք չգործադրել նրան՝ մարդակեր Համիդը միևնոյն ժամանակ հրամայեց իր քաղցած զօրքերին և արիւնարբու համիդիականներին՝ շարունակել հայաբնակ վիլայէթներում այնպիսի գազանութիւններ, որոնք մոռանալ տան Սասունը: Եւ նոր Լանկիթեմուրի հրամանը ճշտութեամբ կատարեց, ոչ մի հայաբնակ գիւղ կամ քաղաք զերծ չմնաց կոտորածից:

Հայաբնակ նշանաւոր կենդանիներից միայն Վանն էր, որ ազատ էր մնացել, սակայն յունիսի սկզբին նրա կործանելու հերթն ևս հասաւ:

Վանի կուրի առիթով «Դրօշակում» լոյս տեսած թղթակցութիւնները ներկայացնում են իսկական գոյներով հայկական շարժման մէջ մի կողմից՝ լիտի տաճիկ կառավարութեան ու Եւրոպայի տխրահռչակ դիպլոմատիայի, իսկ միւս կողմից՝ հայ անգէն ժողովուրդի ու անձնուրաց հայ յեղափոխականների կատարած դերերը:

Վասպուրականում բարբարոս քրդերն ըստ սովորութեան շարունակում էին իրենց մասնագիտութիւնը դարձած սպանութիւնները և աւերումները: Սակայն այս տարի նրանք զարմացքով կատարի ընդդիմադրութիւն էին գտնում մի քանի հայ գիւղերում, ուր կային դաշնակցական զինւած հայդուկներ: Այդպիսի դէպքերում քրդերին օգնելու համար թիւրքաց կառավարութիւնն ուղարկում էր զօրք: Բայց դա ևս հայդուկային աներեւոյթ խմբերի կողմից անվեհեր ընդդիմադրութեան հանդիպելով՝ ամօթահար միշտ յետ է մղւում: Թիւրքաց կառավարութիւնը, չկարողանալով բռնել և ոչ մի հայդուկ և ցանկանալով ընկճել յեղափոխականներին, իր բոլոր ուշադրութիւնը կենդանացրեց Վանի վրայ, ուր նրա կարծիքով գտնւում էր հայ յեղափոխականների գլխաւոր բունը:

Սկսեցին կատարել խուզարկութիւններ, որոնք ոչինչ չտուեցին կառավարութեան ձեռքը: Այն ժամանակ ձեր-

բակաւեց և ծեծի ու անպատուութեան ենթարկեց Չարուհի Տիրոյեան օրիորդը, իբրև դաշնակցական գործիչ: Քաղաքն արդէն ծայրայեղ յուզման մէջ էր, երբ յունիսի 2-ին գիշերապահ զինւորները կուր են սկսում մի խումբ հայերի հետ: Կուրի ժամանակ ընկնում են 2 տաճիկ զինւոր և մի միլիազիմ: Այդ յուզողահաւասանների՝ արիւնը բաւական էր գրգռելու թիւրք խուժանի ֆանատիկոսութիւնը: Հենց այդ էր ցանկանում թիւրք կառավարութիւնը: Միւս օրը տաճկական թաղերում բնակող հայերը՝ առանց ընդդիմադրութիւն ցոյց տալու՝ կոտորւում են քիւրդ և տաճիկ խուժանի ձեռքով չեն խնայւում նոյն իսկ երեխաները: Եւրոպական հիւպատոսներն այդ բոլորը տեսնելով՝ ոչ մի միջոց ձեռք չեն առնում, զսպել տալու համար խուժանի վայրագութիւնը:

Այլ տեսարան է ներկայացնում հայաբնակ Այդեստանը, ուր մեր յեղափոխականները զինւած ժողովրդի հետ 6-7 օր շարունակ կատարել կուր են մղում թշնամու դէմ, հերոսաբար պաշտպանելով իրենց բռնած դիրքերը: Եւ այդ զինւած ընդդիմադրութեան շնորհիւ Այդեստանը բոլորովին ազատ է մնում կոտորածից:

Ահա այդ ժամանակ սուլթանի հաւատարիմ ծառաներն դիմում են եւրոպական հիւպատոսների օգնութեան: Եւ նախկին թրքամոլ Սոլթիբուրու այժմեան արժանաւոր աշակերտը, Վանի անգլիական յոստիկան՝ հիւպատոսը մեծ ծառայութիւն է ցոյց տալիս գազան սուլթանին: Նա պահանջում է, որ հայերը յանձնեն իրենց զէնքերը, անձնատուր լինեն կատարած տաճիկ խուժանին ու զօրքին և մասնեն 10 գլխաւորներին, երևի նոր զոհեր մատակարարելու համար Պոլսի կախաղաններին:

Իսկ ի՞նչ երաշխաւորութիւն էին խոստանում հայերին անգլիական հիւպատոսը և նրան համակարծիք միւս եւրոպական պետութիւնների ներկայացուցիչները: Ոչինչ: Նրանք միայն սպանում էին, որ հակառակ դէպքում քաղաքը պէտք է ուժակոծուի: Եւ չնայած, որ մեր պաշարւած կորիճները պահանջում էին մի քանի օր ժամանակ վերջնականապէս պատասխանելու համար, միւս օր արշալոյսին, եւրոպական հիւպատոսների լուռ համաձայնութեամբ, տաճկական թնդանօթները սկսում են ուժակոծել Այդեստանը, որ իր փրկութիւնը գտել էր մի բուն առիւծասիրտ յղանֆեդայիներին՝ հրացանների պաշտպանութեան տակ: Մեր քաղքի շուրջը փլւում ու այրւում են ուժակոծւած տներ, սուլւում են թշնամու գնդակները, բայց նրանք ոգևորւած ժողովրդի ազատութեան համար մղած կռուով՝ անվեհեր շարունակում էին մարտնչել և երգել: Այո, անհասկանալի պէտք է լինէր բռնութեան վարձկան զինւորների համար մի խումբ զինւած հայերի աներկիւղ կուր և, ամենամեծ վտանգի ժամանակ, նրանց ոգևորւած ազատ երգը: Անջնջելի և խրատուսիչ կը լինի հայ ժողովրդի համար

նրա աներկիւղ զաւակների ցոյց տւած այդ կամքի դժբը և բարոյական վեհուածութիւնը: Նա տեսաւ ղինւած ընդդիմադրութեան փրկարար հետեանքը:

Չուզենալով զէնքը ձեռին անձնատուր լինել, միւս կողմից ցանկանալով դադարեցնել քաղաքի ուժաւորութիւնը՝ մեր կտրիճները ամբողջ օրը անվեհերութեամբ կուշտով և գետին գլորելով 200 թշնամու դիակ, դիշերւայ մութին բարձրացան Վարագայ սարը, չհանդիպելով թշնամու ահագին ոյժից ոչ մի ընդդիմադրութեան: 10 օր սպասեցին այնտեղ մեր քաջերը, բայց թշնամին աւելի լաւ համարեց անդէն ժողովրդի հետ գործ ունենալ, քան զինւած հայրուկներին:

Այս կուրի մասին անշուշտ շատ մանրամասն իմացան եւրոպական կառավարութիւնները, բայց պարլամենտներում դադարկ փոխասածութիւնից զատ՝ նա ոչ մի քաղաքական հետեանք չունեցաւ: Սակայն հայերիս համար նա ունեցաւ մեծ նշանակութիւն, որովհետեւ թիւրքաց կառավարութիւնը հայերի ղինւած ընդդիմադրութեան շնորհիւ չկարողացաւ իր նախագծած Վանի ջարդը կատարել այն ծաւալով, որ սպասոււմ էր:

Սուլթանի անամօթ կառավարութիւնը իսկապէս ոչ մի նշանակութիւն չի տալիս Եւրոպայի խեղդատակ դիպլոմատիային և հայ ահաբեկիչի ատրճանակից ու քաջ հայրուկներին հրացանի գնդակներից նա աւելի է վախենում, քան իրար ջլատող և չեզոքացնող վեց մեծ պետութիւններից:

Վանի կուրը դարձեալ ցոյց տւեց, որ միայն ղինւած հրոսակային խմբերով կարելի է պաշտպանել ժողովուրդը: միայն անընդհատ հրոսակային խմբերով կարելի է տալ վերջնական մահացու հարւած տնտեսապէս և բարոյապէս ընկած սուլթանի կառավարութեան:

Ուրեմն, կեցցէ՛ Վանի հայ ժողովուրդը. կեցցեն՝ Վասպուրականի մեր հայրուկները: Թող նրանց օրինակը եռանդ ու հաւատ ներշնչի հայ յեղափոխականներին, ոյժ տայ հայ ահաբեկիչի բազկին և բորբոքի հայ ժողովրդի սրտում ապստամբական սուրբ կրակը:

Կեցցէ՛ք անվեհեր ընկերներ, Գուրք մի պայծառ գիծ ևս թողիք հայ ժողովրդի մռայլ երկնակամարի վրայ: Գուրք փառաւորեցրիք հայկական յեղափոխութեան առաջին քայլերը:

Ն.Ս.Մ.Ա.Կ ՊՈՂՍԻՅ

1/16 յուլիս 96 թ.

Հինգ մահերէ ետքը՝ Համիտեան Վ. Պոլսոյ կախազանք՝ ոտքերը փռած կը հանգչի երկու շաբաթէ ի վեր: Թէ որքան պիտի տևէ այդ հանգիստը, յայտնի չէ. միայն սա փտեմք, որ կախաղանի համար նշանակուած վերջին չորեքշաբթին անցաւ նոր կեանքեր չլափած:

Վախաղանի գործողութիւնը հետզհետէ հանդիսաւորութեան կերպարանք մը առաւ. դիակները ցուցադրութեան մը պէս սկսան ի տես դուրիւ Եւ ժողովուրդը որ առաջ կը փախչէր, հետաքրքրուիլ ուսաւ և ուզեց օրէ օր աչքով տեսնել դատապարտեալներուն կրած չարչարանքն ու օրհասականի մը բոլոր կրած դառնագին պրկումներն ու գալարումները:

Վերջին չորեքշաբթիէն առաջ՝ 8 օր խօսեցաւ գալիք մահապարտներու վրայ. քահանայի մը կախելու լուրը շրջեցաւ, ուրիշներ ըսին, թէ թիւրք կին մը ու այր մարդ մը պիտի նետուին այս անգամ՝ Հիդրային ակուններուն տակ, իսկ մեր կարծիքով միմիայն հայ երիտասարդներ էին, որ պիտի երերային օդին մէջ անշունչ սուլթանին դիւական ծիծաղը շարժելու համար: Այսպէս ականջները լցած էին և նոյն չորեքշաբթի առաւօտը բազմութիւնը կանուխ խոնւած էր կամուրջին երկու ծայրերը: Հայերը թախծոտ կսպասէին կախաղանին, որ լուրի թարմ ու կորովի կեանքեր կը ջախջախէ խեղդատակ մահերով. թիւրք ղինուորները, սովորած արդէն անլուր խժժութեանց, վայրագ ժպիտներով կը նային հիմա կախած մարմիններուն, չլանը վզին, ոտքեր ու թևեր օդին մէջ երերուն: հոգեկարբի տուայտանքին մէջ: Իսկ հայ յեղափոխականը, որ մահմեդական բռնաւորին կարծիքով, պէտք է սարսափահար ընկճէր աչքին առջև երկնցած կախաղանի անարգ սիւներէն, սկսաւ աւելի հաշտ աչքով դիտել այդ սև գործին, որ բաց երկնքի տակ, մեկնութեան ամեն խեղաթիւրումներէ ազատ, մարդկային քաղաքակրթութեան խոշոր հակասութիւնն է ձերմակ թուղթի մը պէս:

Կսպասեմք ու կսպասեմք կամուրջին երկու ծայրերը հետզհետէ սուտարացած հոծ բազմութեամբ. յանկարծ ոստիկանները լուր կուտան, թէ յպ ու կ իւն ս էյ ր է օ ք" (այսօր հանդէս չկայ) ու կամաց կամաց կը ցրուինք: Այդ հանդէսը, որ հայ կեանքին տուամով կը վերջանայ, այսօր յետաձգուած է և կը կարծւի թէ գէթ մինչև անորոշ ժամանակ մը սուլթանը վարագործը չպիտի պարզէ իր կրած վախին ազդեցութեանը ներքև, իլուր այն շշուկին, որ փսփսուքով սկսաւ և յետոյ հազարաւոր բերաններէ ելած աղաղակի մը չափ թանձրացաւ ու երեսին զարկաւ լիրք անիրաւութիւն մըն ալ, որ իբրև վերջին միջոց, կախաղանի սիւները կանգնեց երկնքի տակ, իբրև կոթող քանդակաքի:

Կըսէ թէ, Եւրոպական պետութիւնների ներկայացուցիչները, գործ դրւած անիրաւութեանց վերջապէս համոզուած, որոշում կընեն հաւաքական գումարումի մը մէջ, և ի դիմաց ամենուն, Աւստրիոյ դեսպանը դիտողութիւն կընէ առարկելով, որ կախաղանը անխորապէս պէտք է գործ դրուի, և հիմա կարգը թիւրքերունն է: Նոյն իմաստով դիտողութիւն ըրած է Ֆրանսայի դեսպան Գամպոն, երբ երկու մայրապետներ Շիշլիի ջորքերէն բռնի առևանգելով Քեաղըտ-հանէի ձորերուն մէջ իրենց կուսական արիւններուն մէջ թաթխուած էին և օրհասական վիճակի մէջ փոխադրուած իրենց կուսատունը, որ հարկաւորաբար, կը ջնջէր երկու թիւ իր սրբուհիներու շարքէն:

Մահմեդական ոճրագործը կախել, ըլլալիք բան չէ ատ. սօֆտաները դիտողագիր կը մատուցանեն իրենց հոգևոր իշխանութեան, թէ մահմեդականին՝ ս. գիրքը այդ կարգի պատիժ մը չի թողարդեր իր հաւատացեալ

ներու մասին, և ատոնք՝ մօլլաները, ահագին թւով կամօրջին վրայ խոնւած էին կախաղանին չորեքշաբթի օրը, կարծելով թէ մահաբերական ոճրագործներ պիտի արատաւորէին այս անգամ «կեանքի» համար ըստեղծած պատիժով: Աստիկանութեան նախարարն ալ, որ կանխաւ շատ բանի տեղեակ և պատահականութեան մը դէմ պատրաստ գտնելու համար, մահակներով արդէն զինած է թիւրք ամբօխը, խոնւած բազմութիւնը տեսնելով, իր սուլթանին կը տեղեկագրէ, որ լաւ կըլլայ կախաղանի հանդիսաւորութիւնը յետաձգել դոնէ: Իսկ Պատրիարքարանն ալ իրաւամբ դիտել տւած է, որ կախաղանի պատիժը միմիայն հայոց համար գործադրելով, խուլութիւնները յայտնապէս գրգռելու վերջին միջոց մը կը նկատէ:

Այս ամեն դիտողութիւնները, որոնք ուժովցան մանաւանդ երկու մայրապետներու ղոհներէն, ցայսօր յետաձգեցին կախաղանի նոր ղոհները:

Սուլթանը հիմա աւելի կարեւորներով զբաղած է. կրեօն թէ և ջարդերու մէջ՝ օրէ օր նորանոր ղոհներ կաւելցնէ իրմէն, բայց զէնքերը գետին չի ձգեր վատօրէն. Յունաստանն ալ ձեռքերը խաչաձև կուրծքին վրայ դատապարտած է ոչ մէկ բան չննելու: Անոր նոյնպէս կզբաղեցնէ սուլթանը: Եկած լուրերուն մէջ թէ և ամեն մէկ կէտ արիւն կը հոտի և թիւրք բարբարոսութեան նոր տեսարաններ ի յայտ կը բերեն, սակայն «Դաշնակցութիւնը», անտարակոյս, իր պարտքը կը կատարէ ոգի ի բռնի և այս անգամ, ատամն ընդ ատաման ծայրայեղութեանց կը յանգի Վանայ յեղափոխութիւնը: Մեղի համար եղածը եղած է արդէն. կը մնայ միայն գիտնալ, թէ ի՞նչ կրնանք փոխարինել մեր դահիճներուն 20-րդ դարու դռներ առջև, կը փոխարինենք ատիկա և պարտազանց չենք մնար:

Մէկ-երկու շաբաթէ ի վեր պատրիարք սրբազանին հրաժարականը դարձեալ խօսքի նիւթ եղաւ: Ֆիլիպէի մէջ հրատարակած թիւրք թերթ մը «Խայրէթ» անունով, գրգռիչ յօդուածներ կը հրատարակէ մասնաւորապէս Եզմիրեանի դէմ: Ասիկա չի զարմացներ մեզ, ատիկ աւելին իսկ կրնան ընել միայն ուշադրութեան առնելիք կէտը սա է, որ թերթը իբրև արգիլած թերթ, իրաւունք չունի յայտնապէս մէջտեղը երևալ, և սակայն կրնանք գտնել ամեն լրագրագիտական մօտ: Սուլթանական հնարքներէն մին ալ սա է:

Հրաժարականը պահ մը հաւանականութեանց կարգը մտաւ և Ռուսիոյ դեսպանատան մէկ թարգմանն ալ Մաքսիմով, շաբաթ օր մը պատրիարքին գնաց թելադրելու, որ հրաժարականը տայ: Եզմիրեան, հասկնելով միանգամայն, թէ ինք պաշտօնի գերի մը չէ, յայտարարած է՝ որ հայոց պատրիարքը ընտրւած է ազգային երեսփոխանութենէ մը, թող հրաման տրւի ժողով գումարել և ինք իր հրաժարականը կը մատուցանէ, պատճառաբանած՝ հրաժարական մը սակայն: Այս պայմանէն դուրս ինքը կը մնայ ակոռին վրայ, ցորչափ անձնական խորին համոզումներ չթելադրեն զինքը հրաժարելու:

ՆԱՄԱԿ ՍԱՍՈՒՆԻՑ

(ԱՐՐՈՅՈՒ ՎԵՐՋԻՆ ՆԱՄԱԿ)

6/18-ին մարտի 96 թ.

Մշոյ դաշտում մի ժամանակ դէս ու դէն թափաւելուց յետոյ վերջապէս ձմեռայ ապաստարան գտայ Սասուն գաւառում: Ժողովուրդը սկզբում պաղ ընդունելութիւն արաւ մեղ: Սակայն այստեղ մի ամսից աւելի մնալուց յետոյ գործ պատահեցաւ ինձ Մուշ գրնայու, որտեղից կրկին վերադառնալով Սասուն՝ ժողովուրդը գտայ տարբեր արամադրութեան մէջ. բոլորովին սթափել էին լքած դրութիւնից:

Ինչպէս ձեզ յայտնի է, երոպական դեսպանների ստիպմամբ սուլթանը որոշել էր սասունցոց երկուհազար լիրա նպաստ բաշխել: Դրա համար կազմել էր տել թիւրքերից մի մասնաժողով. սակայն այդ մասնաժողովը աշխատեց որքան կարելի էր քիչ դրամ հասցնել թշուառ սովեալներին: Այդ մասնաժողովի անգամները 500 լիրառոճիկ ստացան սովեալներին յատկացրած գումարից, նրա մեծ մասը բաշխեցին քիւրդերին՝ շինութեանց համար ձեռք բերած փայտի փոխարէն, 1 դահեկանի արժէքը 5 դահեկանի հաշւելով, իսկ մնացածը մի չնչին գումար՝ ժողովուրդին:

Թիւրքաց կառավարութիւնն աշնանը արգելքներ յարուցեց Մուշից Սասուն ազատ ցորեն փոխադրելու դէմ, առարկելով, թէ սասունցիք կարող են իրենց պէտք եղածից աւելի ուտեստ փոխադրել և յետոյ, իրենց դիրքն ապահովելով, յարձակում գործել Մշոյ վրայ և կոտորել իսլամներին, մինչ դեռ ինքն հաւատացած էր, որ սասունցոց ձեռքում մի փայտ կտրելու քշուշ (յօտոց) անգամ չի մնացել: Եւ ահա ձմեռը հասաւ, սովատանջ ժողովուրդը ստիպւած էր ձմեռայ ցուրտ եղանակին օրապահելը շալակով Մուշից տեղափոխել և այն էլ Սիմ սարի գագաթի վրայից անցնելով և սարսափելի վտանգների ենթարկելով: Հարկւրաւոր շալակաւորներ խուժ-խուժ գիմում էին Մուշ, բայց շատ անգամ կէս ճանապարհ գնալուց յետոյ եղանակի խստութենէն չկարողանալով անցնել, վերադառնում էին իրենց անբը դադարկածուն: Յունւար ամսում 4 հոգի սառեցան և մի քանիսին էլ ձեռք ու ոտքեր յառելով անգամալոյծ դարձան: Չնայած այդ բոլորին, սասունցիք ստիպւած էին իրենց կեանքը վտանգի ենթարկել, եթէ սովից չէին ուզում մեռնել: Բացի հացից նրանք ուրիշ ուտելիք չունին: Յաճախ մի միակ կլիէ (կորեկի մի տեսակը) ապուր են եփում և խնայողութեամբ առանց հացի և աղի ուտում: Սասունցին այս ամենը տանում է ի սէր հայրենեաց, չուզենալով գաղթել:

Լուրեր են գալիս Տիգրանակերտի կողմից, թէ շատ հայ գիւղեր ամբողջովին բռնի իսլամութիւն են ընդունել և եկեղեցիներ ու վանքեր մզկիթ են դարձել: Միջոցներ եմ ձեռք առել ստոյգ տեղեկութիւններ հաւաքելու, ստանալուց յետոյ կը տեղեկագրեմ:

Շ Ե Ր Օ

Ընկաւ Վասպուրականի Դաշնակցական Հայդուկային խմբերի սիւներից մէկը ևս, հռչակաւոր Շ Ե Ր Օ ն, որը 10 երկար տարիների ընթացքում, որպէս մարմնացած բողոք, ոգևորում, առաջնորդում էր Ռշտունեաց աշխարհի իր հայրենակիցներին:

Ով ծանօթ է քիչ թէ շատ Վասպուրականում և Պարսկա-Տաճկական սահմանագլխի վրայ կատարած գործողութիւններին, նա անշուշտ լսած կը լինի Շերօի անունը, որը երկար տարիներ կապւած էր իր անբաժան և նոյնքան հռչակաւոր ընկերոջ՝ **ՉԱԹՕԻ** հետ:

Չաթօ-Շերօ, դրանք երկու լուսատու աստղեր էին, որոնք երբևէն եկան յեղափոխական հորիզոնի վրայ 10 տարի առաջ, այն ժամանակ, երբ դեռ ոչ ոք մուտք չէր գործել նրանց հայրենիքը, երբ յեղափոխական գործունէութիւնը կրում էր լոկ քարոզչական բնաւորութիւն: Ահա՛ այդ ժամանակ, այդ երկու խնկելի հայդուկները առաջին դասը, առաջին օրինակը աւին Վասպուրականի ժողովորդին և գործիչներին: Չկարողանալով այլևս տանել իրենց հայրենակիցների՝ լեռնաքնակ շատախցիների կրած տառապանքները տաճիկ բռնակալ կառավարութեան և շրջակայ գրաւանցի ու այլ բարբարոս քիւրդ աշիրաթների կողմից, Չաթօն և Շերօն, քիւրդերի դէմ մղած մի կուռից յետոյ թողին իրենց հայրենի կաճէտ գիւղը-Շատախում և հրացանը ձեռքերին՝ երբեքցին վրէժխնդիր լինել իրենց թշնամիներից: Վերին աստիճանի անվեհեր և յանգուգն գործունէութեան շնորհիւ, Չաթօ-Շերօի անունը հռչակ ըստացաւ Վասպուրականում և սարսափ ձգեց թշնամիների վրայ: Չաթօ-Շերօն դարձան հայ ժողովորդի մարմնացած բողոքը և ոգևորիչները. թշնամի քրդերն անգամ իրենց երգերով դրւատեցին նրանց քաջութիւնները:

Չաթօ-Շերօի կեանքը երկար տարիներ անցել է անընդհատ կռիւների, անընդհատ ընդհարումների և վրէժխնդրական անզուսպ գործողութիւնների մէջ, որոնց հետ կը ծանօթանան ընթերցողները մօտիկ ապագայում:

Շերօի համար գոյութիւն չունէր ոչ որոշ տեղ և ոչ սահմանափակ գործունէութիւն: Նա ամեն տեղ էր, ուր վտանգ կար, ուր պահանջ կար յանգուգն գործունէութեան, ուր հարկաւոր էր արիւն թափել: Մէկ տեսնում էք՝ նա իր ընկերների հետ պաշտպանում է իր հայրենակիցներին՝ քրդական անվերջ թալաններից մէկ տեսնում էք՝ յարձակումներ է գործում քիւրդ ցեղապետների վրայ, վրէժխնդիր լինելով նրանց հասցրած տառապանքների համար. մէկ տեսնում էք՝ գիշերային խուարի մէջ զէնքեր է տեղափոխում կամ մի բռնոն քաջերի հետ ձեռքում է թշնամու ահեղ շղթան և թռչում իր հայրենակիցներին օգնութիւն հասցնելու: Ընորհիւ իր չափազանց նուրբ լսողութեան, իր զարմանալի ընդունակութեան ճանապարհներ, տեղեր ճանաչելու, շնորհիւ իր բազմամեայ փորձառութեան յեղափոխական փոթորկալից կեանքի մէջ, նա

անգնահատելի անդամ էր ամեն մի հրոսակային խմբի համար: Երկար տարիների ընթացքում բազմաթիւ անգամ ամենամեծ վտանգներից ազատւած, յեղափոխական կրակի մէջ մխած, Շերօն իր անվեհերութեամբ և կատարեալ արհամարհանքով դէպի մահը, բարոյական մեծ նեցուկ էր հրոսակային խմբերի այն անդամների համար, որոնք առաջին անգամն էին փորձում իրենց՝ ուժերը այդ տեսակ գործունէութեան մէջ: Կռիւների ժամանակ Շերօն արժւի հայեացքով դիտում էր բոլոր ընկերների բռնած դիրքերը և եթէ նկատում էր մէկի կամ միւսի դիրքի թուլութիւնը, իսկոյն շտապում էր օգնութեան, և խմբի նոր անդամներն իրենք էլ առիւծ էին կտրում, երբ տեսնում էին Շերօին թշնամու տեղացող դնդակների տակ սրա կամ նրա կողմը ուղղելիս:

Շատախցի Շաքիր աւապակի դէմ կատարած յարձակումների, Բօղաղ-Քեսասանի, Չուխ-Գեադիկի, նարեկայ և այլ մի շարք փառաւոր ընդհարումների ժամանակ, որտեղ թշնամին տեսաւ «Փլահ-կաչաղների» ուժը, տեսաւ, որ մի զօհի փոխարէն մի քանիսն են պահանջում. տեսաւ և ակամայ սկսեց յարգանք տածել դէպի արհամարհած «Փլահը», — այդ ընդհարումների ժամանակ Շերօի ցոյց տւած անվեհերութիւնը և կատարեալ սառնասրտութիւնը վտանգի առաջ անընկճ կը մնան նրա դեռ կենդանի մնացած ընկերների սըրտերում և բարոյական բարձր օրինակ կը դառնան նոյն ճանապարհով ընթացողների համար:

Շերօն մտաւ յեղափոխական ասպարէզ իր ընկեր Չաթօի հետ: Հաւատարիմ մնալով իրենց երգումին, Չաթօն և Շերօն դարձան անբաժան ընկերներ երկար տարիների ընթացքում: Քիչ է ասել, «յանքաժան ընկերներ», որովհետեւ այդ երկուսը կարծես թէ մի մարմին, մի էութիւն էին կազմում: Միայն անողորմա՛հը բաժանեց նրանց միմեանցից և զարմանալի զուգարկութեամբ, Շերօն նահատակեց հենց նոյն վայրում, որտեղ երկու տարի առաջ ընկաւ և Չաթօն...


Շերօն իր արտաքին տեսքով բուն լեռնականի սըրկաւորութիւն էր թողնում՝ նա կարճ հասակով, բայց ուժեղ կազմածքով մի տղամարդ էր: Շերօի իսկական անունը Մարկոս էր:

Դ՛ուք, հայրենիքի ազատութեան առաջին կարապետներ, դուք կատարեցիք ձեր սրբազան պարտքը Սուրբ Գործի առաջ, դուք ընկաք, բայց ձեզ երբէք չեն մոռանալ ձեր յեղափոխական ընկերները, ձեզ երբէք չի մոռանալ Վասպուրականի բազմատանջ ժողովուրդը...

Կօնդօնում ամուսնոյ 27-ից սկսել ևն Միջազգային Սօցիալիստական Կօնգրէսի նիստերը: «Իրօչակի» խմբադուրութիւնն ուղարկեց Կօնգրէսին իր ղեկուցումը հայկական խնդրի վերաբերմամբ: Կօնգրէսի հետեւանքների մասին կը տեղեկացնենք մեր ընթերցողներին:

Դաշնակցութեան անձամբներից խնդրում է թղթակցութեան և ներատուութեան համար դիմել:
Armène-Gaspar, poste restante, Carouge (Suisse)
Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան:

ԴՐՈՇՆԿ



„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿ. ԴԱՇԵԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍ ԲԱՊՈՒՋԵԱՆ

Ժամանակը անցաւ, սակայն չմարեցաւ այն օրերու յիշատակը: Մնահամար ձերբակալութիւններէ, բանտերէ ու աքլորներէ վերջ կառավարութիւնն ու հարուստներ մեռած կը կարծէին յեղափոխական ոյժը Պոլսոյ մէջ եւ կը պատրաստուէին ազատ շունչ քաշել: Շահրազը, այդ ստոր արարածը, յանդիմանեցաւ յեղափոխութեան դէմ դաւաճանել, սողացող հայ լրտեսներ ամեն կողմ կը վխտային. հարկ էր սարսափեցնել անոնց, հարկ էր ասպնդոցանել, որ «Դաշնակցութիւնը» թելատարած կը հսկէ եւ արծաթ աչքերով կը դիտէ իր շուրջը անցած դարձածները:

Չորս անաբեկիչներու Գարաքէօյի հերոսական կռիւը եւ անոնց եղբրական մահը յաւիտենական դատապարտութիւնն եղան վաշխառու Եղիային: Այնուհետեւ ուրիշներ կայծակի արագութիւնով դեպի վրայն լրտես Մարգարը, որոյ գոյութիւնը յեղափոխական մարմնոյն խոշոր արատ մ'էր: Իրերու այսքան արագ յաջողող դէպքերը, դեռ ցանկալի ազդեցութիւնը չէին ըրած. վատութեան սերմը ցած հողիներու մէջ միշտ գոյութիւն ունէր. հարկ էր, որ արիւնոտ սուրը շողար նաեւ անոնց գլխուն:

90 թւականին լուսարար Օննիկի ըրածները, նոր մասնութիւնով մը, աւելի ծանրակշիռ կերպարանք կը ստանային: Այս անպիտանը համարձակած էր Մայր-Եկեղեցին ազատ ստանած անաբեկիչը կառավարութեան մատնել, որու վրայ կառավարութիւնը Գուճաբուի փողոցները ձիաւոր ու հետեւակ զինուորներով լեցուց եւ հայերը սարսափով սկսան յիշել 86-ի եւ 90-ի օրերը:

Օննիկ մասնաձեռն եւ հետեւաբար մահան դատապարտուած էր: Վայրագ զինուորներու ներկայութիւնը արհամարելի էր, երբ ընկերական լրէժանդրութեան ձայնն էր, որ կը հնչէր: Այդ ձայնը արձագանք գտաւ Ժողովրդեան հաբազատ դաւակի մը սրտին մէջ, որ ձգելով կոշկակարի մուրճն ու գողնոցը, զէնքը ձեռին նետուեցաւ ասպարէզ արդար լրէժանդրութեանը բորբոքած սիրտը զովայնիւր համար:

Իրիկուն մին էր Օննիկ զինուորն մը նստած, ալքօսի գորտչիներուն մէջ կուզէր խեղդել իր խղճի խայթը. դուրսը ոստիկաններ եւ զինուորներ սպառազէն՝ ամայացած փողոցներու մէջ կը դեգերէին, սրճարանները դատարկուած եւ բոլոր կասկածելի կամ ըստ երեւոյթին անգործ մարդիկ ձերբակալուած էին: Ձիերու անընդհատ դափրոտոցը, զէնքերու շաչիւնը, նոյն խոկ իրենց սուններուն մէջ երկչոտ քաղքինիներու սիրտը դող կը հանէին: Օննիկ հակառակ այնքան հակողութեան, դարձեալ անապահով կղզար. ինքզինքը եւ կը սոսկար Դաշնակցութեանէ:

Կոշկակար Մարտիրոս իր քաջութեան նախատինք համարելով մութին մէջ զարնել հայրենիքի դաւաճան մը, որոշեց օրցերեկով, հասարակութեան աչքին առջեւ պատժել վատը. ուստի արհամարհելով վրբ սուլթանին ծառաները, անցաւ անոնց վրոճակին մէջէն ու մտաւ դիւնստուն: Մինչդեռ մասնիչը գլուխը օղիի դաւաթին վրայ կախած կը մտմտար, յանկարծ դաշոյնի երեք հոժկու հարւածներ դիտապատ դեպին կը փռեն զինքը:

Մարտիրոսը դաւաճանի դիակը իր ոտքին տակ փռելէ յետոյ, առանց շփոթելու, ատրճանակը ձեռքը սեղմած՝ դուրս սլացաւ եւ առաջին հանդիպած ոստիկանն ու զինուորը երկու դնդակով դեպին տապալեց: Ծամբան բայ էր, Մարտիրոս հեռացաւ եւ բայ տան մը զըռնէն ներս մտաւ: Տնեցիք սեանելով օտարոտի արիւնաշաղախ երիտասարդը, սկսան աղաղակել: Ձիաւոր զօրքեր այդ միջոցին պաշարել էին բնակարանը. անաբեկիչը կատաղի առիւծի պէս խոյսցաւ անոնց վրայ եւ մէկը գլորելէ ետքը կռիւն խոյս աւաւ: Հալածոււմը սոսկալի էր: Ան



ՄԱՐՏԻՐՈՍ ԲԱՊՈՒՋԵԱՆ

մեն կողմէ «անձնատուր եղիլ» կը պտռային. ինչ որ քաջիրու համար այդ բառը գոյութիւն չունի: Ձիաւորները խլատ մօտեցած էին, ատրճանակին մէջ դնդակ մը միայն մնացած էր. «Ես ձեզի պէտներուն անձնատուր չեմ ըլլար» գոչեց խրոխտ անաբեկիչը եւ վերջին դնդակն ալ իր բերնին մէջ պարպեց ու մտաւ հերոսի նման, նախընտրելով վայրկենական վիհանձն մահը թրքաց բարձրաստիկան անլուր չարչարանքներէն եւ դազանութիւններէն:

Այս դեղձուկ հողի յիշատակը հիացմունքով կը լեցնէ ամեն յեղափոխականի սիրտը:

Վ Ա Ս Պ Ո Ւ Ի Ր Ա Վ Ա Ն Ի Կ Ո Ց Ո Ր Ա Յ Ը

(Ս Շ Փ Ա Վ Ա Ն Հ Շ Ռ Ա Գ Պ Ր)

7-ին օգոստոսի

Վասպուրականի գաւառներում կոտորած հայերի թիւը հասնում է առնւազը 20,000-ի:

Ի Ի Պ Լ Օ Մ Ա Տ—Հ Ր Է Շ Ն Ե Ր

Հասարակական կեանքի մէջ պատահում են այնպիսի անահնկալ գոգախտութիւններ, այնպիսի ահուկ չարիքներ, որ շշմեցնում են ամենամեծ յոռետեսին անգամ: Յոռետեսը, որը միշտ ամենալատ գոյներով է ներկայացնում ապագան, իւր երեւակայութեան մէջ դարձեալ ունենում է մի սահման, որից չի կարող անցնել, նրա կարծիքով, այս կամ այն հասարակական չարիքի աստիճանը: Բայց դժբաղդաբար մենք տեսնում ենք, որ մեր ներկայ կեանքի մէջ յոռետեսի երեւակայած սահմանն էլ ոչնչանում է, և չարիքը տարածում է իր թւերը աւելի հեռու ու հեռու...

Ամեն անգամ, երբ առիթ ենք ունեցել խօսելու եւրոպական դիպլոմատիայի մասին, որը պաշտօնապէս իր «հովանաւորութեան» տակ է առել արեւելքի քրիստոնեաներին, մենք հեռու որեւէ յոռետեսութիւնից, յենւած միմիայն պարզ իրականութեան վրայ, պնդել ենք միշտ, որ ոչ մի դիպլոմատի համար գոյութիւն չունին ոչ քրիստոնէական, ոչ մարդասիրական, ոչ քաղաքակրթական, և ոչ այլ նոյնանման նպատակներ: Մենք ընդունում էինք, որ դիպլոմատիան կարող է ոչ թէ միայն չօգնել մեզ, անտարբեր մնալ, այլ մինչև իսկ վնասել մեզ, աշխատել կանգնեցնել ծնունդ առած շարժումը, եթէ այդ իր շահերին վնասակար նկատուի: Բայց մենք— և մեզ հետ նոյն իսկ ամենամեծ յոռետեսները— դժբաւար չարող էինք երեւակայել, որ քաղաքակիրթ աշխարհի «քաղաքակիրթ» ներկայացուցիչները հասնէին անխղճութեան, ամարդութեան ու լրբութեան այն ծայրայեղ աստիճանին, որի վրայ նրանք կանգնած են այժմ, և ոչ թէ միայն մեր, այլ և ամբողջ արեւելեան հարցի վերաբերմամբ:

Եւրոպական դիպլոմատները «գլխութեան քոյրերի» նման շօջապատել են «հիւանդ մարդուն» և ամենաաննիւրի միջոցներ գործ դնելով, աշխատում են պահպանել նրա նեխած կեանքը: *l homme malade* (հիւանդ մարդը) դառել է *enfant gâté* (երես առած երեխայ), որին պահում, պահպանում, շոյում, վսպիստում են ամեն կողմից: Հոգատար դիպլոմատներ

ըր ամենայն աջողութեամբ մրցում են իրար հետ այդ ասպարիզում: Մէկն իր արջի թաթի զօրութեամբ միջոց է տալիս նրան կոտորել, ջարդել տասնեակ հազարաւոր հայեր՝ երկրի «խաղաղութիւնը» վերականգնելու համար: Միւսը իր հաստ գրպանն է բաց անում և առջարկում իր սակիները տնտեսական բացարձակ քայքայումից ազատելու համար, երրորդի նախաձեռնութեամբ ընդհանուր ճնշում են գործ դնում ու սպառնալիքներ կարդում ապստամբ կրէտացիներին: Ճնշում են Յունաստանին, որ անուղղակի կերպով օգնում է իր արիւնակից եղբայրներին, ճնշում են Բօլգարիային, որ չի խանգարում մակեդոնական շարժմանը... Բայց ոչ մի տեղ, ոչ մի պարագայում եւրոպական դիպլոմատը չարտայայտեց իր էութիւնը այնքան ստոր, զգեւել և կոպիտ կերպով, ոչ մի տեղ նա ցոյց չտուց իր բարոյական այլանդակութիւնը այնքան շոշափելի փաստերով, որքան Վանի և ընդհանրապէս Վասպուրականի վերջին աղետալից դէպքերի ժամանակ: Այդ դէպքերն այնքան սրտաձմիկ էին, որ ամենաչոր, ամենաքարասիրտ դիպլոմատն անգամ պէտք է յիշէր, որ ինքը ոչ միայն դիպլոմատ է, այլ և մարդ: Բայց այդ չեղաւ: Պետերսի և Աֆրիկայի այլ հերոսների արժանաւոր ընկերակիցները՝ Վանի անգլիական հիւպատոսը, որը շատ առաջ էր ստացել վանեցիներից «ոստիկան-հիւպատոս» տիտղոսը և քրիստոնէութեան սկզբունքը տարածող բողոքական միսիօնար Ռէյնօլդը հաւասարապէս զգեւել են մեզ թէ՛ իրենց բացարձակ լրբութիւններով և թէ՛ իրենց գաղտնի խարդաւանանքներով:

Մուտք գործելով Տաճկահայաստան, շփուելով յաճախակի վայրագ կառավարութեան հետ, դրանք կործես թէ մոռանում են իրենց ծագումը, մոռանում են այն միջավայրը, ուր ծնւել ու սնւել են, մոռանում են այն դարը, որի մէջ ապրում են: Առանց խղճահարութեան, առանց ամօթի, բացարձակ կերպով պաշտպան հանդիսանալով սուլթանի կառավարութեան, դրանք ամենանենգ ճանապարհներով ստիպում են յեղափոխական գնդերին՝ հեռանալ քաղաքից, դրանք մատնում են այդպիսով անզէն ժողովրդին վեճիմարի վիճակների ու վայրագ խուժանի կատաղութեան, իսկ յեղափոխական գնդերին՝ Պարսկաստանի ճանապարհի վրայ պատրաստած զինւորների և համիդիականների անհամար բազմութեան:

Կոտորածի այդ սարսափներից յետոյ նրանք դեռ համարձակուում են բարդել բոլոր յանցանքը հայերի վրայ, մղմացնել կառավարութեան և բաշխօգուկների վճմակների գործած գաղանթութիւնները, ուրանալ քաղաքի ումակոծութիւնը, քաղաքի և շրջակայների աւերւիլը, թալանիլը, հազարաւոր զոհերի թիւը... Եւ այս պէտք բաւական չէ, նրանք յանդրնում են հանրապրութիւնների պատրաստել հայերի կողմից, ստի-

պում են ստորագրել անձարացած, ահաբեկած ժողովուրդին, իբր թէ նա ինքն է մեղաւոր, որ իրեն կոտորել են, թէ նա շնորհակալ է կառավարութիւնից, որ կոտորածը չի շարունակում... Սա արդէն չափից դուրս է այս դէպքում մարդ դժարանում է հաւատալ, թէ դրանք մարդկային արարածներ են և ոչ թէ հրեշներ մարդկային կերպարանքով...

Վասպուրականի կոտորածի ահուկութիւնը անյայտ մնաց շատ շատերից. դիպլոմատները կարող են դրանով պարծենալ: Բայց ումբախտաբար տները, արիւնքների փողոցները, անթաղ դիակները, մոխիր դարձած դիւղերը դեռ մնայուն վկաներ են սուլթանի գազանութիւնների և դիպլոմատիայի լկտիութեան: Անթի, մերկ, բոբիկ մնացած բազմաթիւ կենդանի էակների խուլ հեծեծանքը, առեւանգւածներին, բռնաբարւածների ապարդիւն ձիջերը, հազարաւոր անմեղ զոհերի բարձրաձայն անէծքը... այս բոլորը դառը բողոք են Եւրոպայի հասարակական դատաստանի առաջ՝ իր ներկայացուցիչների տմարդութիւնների դէմ:

Վասպուրականն աւերեց, սուլթանը, Շաքիրը, Սահեօնի և այլ փաշաները հրձոււմ են: Հրձոււմ են և դիպլոմատները. նրանցից իւրաքանչիւրը հասաւ իր նպատակին: Իսկ մե՞նք...

Ճիշտ է. մենք կրեցինք սոսկալի հարւած, անհամար աւելի զոհեր տւինք, քան մեր թշնամին, կորցրինք մեր լաւագոյն ընկերներից շատերին, բայց մեր ժամանակաւոր պարտութիւնը, մեր թշնամիների հրձանքը մեզ չեն վհատեցնիր: Ցասնեակ հազարաւոր դժբաղդների յուսահատական ձիջերը պահանջում են մեզանից արդար վեճեփնդրութիւն, մեր հարիւրաւոր նահատակած ընկերների սուտերները կոչում են մեզ դէպի անձնագոհ գործունէութիւն:

Վ Ա Ն Ա Յ Գ Է Պ Գ Ե Ր Ը

ՅԵՂԱՓՈՒՍԿԱՆՆԵՐՈՒ ՔԱՇԻՆԼԷ ՅԵՏՈՅ

3/15 յուլիս 96 թ.

Յունիս 8-ի իրիկուն հայ յեղափոխականներու լեռը քաշւելէն յետոյ, միւս օր կառավարութիւնը թէև դադրեցուց Այդեաստանի ումբախտելը, բայց շարունակեց աւերելը: Միսիօնարաց տունն ապաստանած հայերուն ալ լիրբ անգլիական հիւպատոսը հանգիստ չի թողուց. բոլոր արու մարդիկ դատել տաւ իգական սեռէն, կառավարութեան յանձնելու դիտումով, վերջէն չենք գիտեր ինչ մեծ գլխաւորութեամբ նորէն ազատ արձակեց: Արտորածի ժամանակ ժողովուրդի ապաստարան հիւպատոսների աներն ու միսիօնարների շէկերն էին: Ամենն աւելի գովելի է պարսկական

հիւպատոսի ազնիւ վարմունքը. նա միշտ համակրութեամբ վերաբերեցաւ դէպի մեզ և միշտ նպաստաւոր խօսեց մեր դատի նկատմամբ: Պաշտօնական բանակցութեանց ժամանակ, խանը ամեն կերպով պաշտպանեց մեր իրաւունքները, մինչդեռ անամօթ անգլիական հիւպատոսը և միսիօնար Ռէյնօլդ խիստ կերպով կը պահանջէին, որ հայերն անձնատուր լինեն: Արտորածի խիստ ժամանակ խանը իր անձնական սենեակի մէջ իսկ մարդիկ պահեց ու պաշտպանեց, ինչպէս և իր դրացի հայ տունները:

* *

ՅԵՂԱՓՈՒՍԿԱՆՆԵՐՈՒ ՀԵՏԱՄՈՒՏ ԼԻՆԵԼԸ

Յունիս 14-ին Թափուր-աղասին 300-է աւելի զօրքերով Վարագայ սարի ստորոտը եկաւ և չհամարձակելով վեր բարձրանալ բանակը դրաւ Ձորոց վանք թիւրք գիւղը մօտ և լուր դրկեց այդ տեղէն, որպէսզի «կաշախները» թողնեն և հեռանան:

Յունիս 17-ի կոտորածի նշանաւոր հերոս Ֆէրիդ Սահաթտօնի փաշա, որ քննիչ յանձնաժողովին անդամ է, 5-600 զօրքով, նոյն չափ ալ համիտիէներով երկու լեռնային թնդանօթով և ահագին ուզմամբերով պաշարեց Վարագայ սարը:

Չմոռնաք ըսել, որ նա արդէն լուր առած էր կաշախներու սարէն մեկնելու մասին: Մինչև իրիկուն Վարագայ սարին ամեն մէկ խոռոչը խուզարկելէ յետոյ՝ բնականաբար ոչինչ չգտնելով, այրեց Ս. Գրիգորի վանքը, թալանն ալ իր հարազատ համիտիէներուն յանձնարարելով:

* *

Հ Ա Ն Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

Արտորածը դեռ չվերջացած, մեր լեռ քաշւելէն անմիջապէս յետոյ, սկսեցաւ հանրագրութեանց շարքը: Առաջին հանրագրութիւնով՝ կոտորածի մեղքը հայերու վրայ կը ծանրացնէին, կը հաստատէին հայ ժողովրդի ապստամբ լինելը և այդ պատճառով՝ կոտորածի ենթարկելը, կուրանային թնդանօթներով ումբախտելը: Հրէշ անգլիական հիւպատոսը, ամերիկեան միսիօնար Ռէյնօլդի հետ, այդ հանրագրութեան նախաձեռնութիւնը ստանձնելէ և ստորագրելէ վերջ՝ սկսեցին թնդանօթի գնդակները ժողովել, գոհացուցիչ պարգև խոստանալով գտնողին և յանձնողին: Թնդանօթի խորտակած տեղերն ալ կառավարութիւնը աշխատեց և կաշխատի կորցնել ամեն կերպով: Երկրորդ հանրագրութիւնով, նորէն անգլիական դեսպանի նախաձեռնութեամբ, ժողովուրդը շնորհակալութիւն կը յայտնէ կոտորածի հեղինակ հերոս Սահաթտօնի փաշայի, որու բարձր հովանաւորութիւնը վայելելու բախտն ունեցաւ. (°) և

յոյս կը տածէ, որ նա Այգեստանի ամեն թաղեր զօրքեր պիտի լեցնէ ժողովրդի պաշտպանութեան համար:

Գ Ա Ի Ա Ռ Ն Ե Ր Ը

Վասպուրականի գաւառները սարսափելի կերպով կոտորած են, տակաւին մանրամասն հաշիւ մեզ չէ հասած: Բայց ընդհանուր առմամբ բոլորն ալ աւերակ են:

Մոկս գաւառը ազատ մնացած է ցարդ շնորհիւ քիւրդ Մուրթլա բէկի, որ բացարձակ կերպով պաշտպանած է հայերը և մինչև հիմա կը խնամէ զանոնք ամեն կերպով՝ հաց ու տեղ տալով:

Գաւառներու մէջ դիմադրութիւններ եղած են տեղ-տեղ, մանրամասնութիւնները յայտնի չեն:

Շատախի դիմադրած է քանի մը անգամ և կը դիմադրէ մինչև հիմա. քանիցս կատաղի կուր մղած է թշնամու դէմ. 80-ի չափ քիւրդեր սպաննւած են մէկ թաղի մէջ (Շատախ-թաղ). նոյնչափ ալ հայ. բայց հայերէն սպաննւածները բոլորը խեղճ անդէն մարդիկ են եղած:

Շատախի Փեսան-դաշան ալ՝ դաշնակցական խմբի շնորհիւ Վարդանի առաջնորդութեամբ՝ ազատեցաւ կոտորածէն: Վառաձարութիւնը առաջին անգամ չի մասնակցեցաւ Շատախի կոտորածին և հայերը փառաւոր յաղթութիւն տարան: Մինչև հիմա, (յունիս 3), թաղեցիները դուրս եկած չեն տակաւին իրենց դիրքերէն. կառավարութիւնը երկու օր առաջ զօրք և երկու թնդանօթ ղրկեց այնտեղ, անշուշտ հայերուն դիրքերը ումբակոծելու համար, ինչպէս որ արեց Այգեստանի մէջ:

Վարդան իր խմբով ցարդ անվտանգ է:

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր

Պ Ա Ր Մ Կ Ա - Տ Ա Ճ Կ Ա Կ Ա Ն Ս Ա Հ Մ Ա Ն Ա Գ Լ Խ Ի Յ

8/20 յուլիս 96 թ.

Վանը և նրա հետ ամբողջ Վասպուրականը ևս դարձան աւերակ, ամայի երկիր: Մինչև այժմ թափած հազարաւորների արիւնը չէր յագեցրել Մեծ-Ոճրագործի ծարաւը. յենած եւրոպական նենգ, տմարդի դիպլոմատիայի վրայ, նա՝ Ոճրագործը, իր «հայերի ջնջման» ծրագիրը կարողացաւ աջողութեամբ իրագործել Վասպուրականում ևս: նա այդ վաղուց էր մտադիր անելու, բայց չէր յաջողում: Աշնան կոտորածների ժամանակ, երբ Վասպուրականի զանազան կէտերում սկսեցին երևան գալ հայդուկային խմբեր, կառավարութիւնը պարզ տեսաւ, որ իր ունեցած ուժերով անկարող է իրագործել իր մտադրութիւնները: Այս պատճառով զարնան սկզբից քաղաք թափեց համիրիէ գնդերի ահագին բազմութիւն. զօրքի թիւը, որ առաջ 800-1000

էր. հասնում, հասցրեց մինչև 8000-ի և իր բոլոր նախապատրաստութիւնները տեսնելուց յետոյ սպասում էր միայն մի առիթի. այդ էլ եկաւ:

Ջարուհի Տէրոյեանի ձերբակալումից մի քանի օր յետոյ, յունիսի 3-ին գիշերը Այգեստանի մօտ, Ուրբաթ-Առու կոչւած տեղում սպաննեցան մի հազարապետ և 5 զօրք. շատերը այդ վերագրում են մաքսանենգ քրդերին, որոնք ալ էին փախցնում. իսկ կառավարութիւնը այդ վերագրեց հայերին:

Այդ սպանութիւնը տաճիկների մէջ մեծ յուզումն է առաջ բերում. սպաննւածների դիակները քաղաք բերելիս, մինչև Խաչ-փողան փողոցը սպանւում են 12 անմեղ հայեր: Իսկ տաճիկ ամբօխը, համիրիականները և զօրքերը յարձակում են գործում՝ Վլոր-Գար, Հայկավանք և Սուրբ-Ախր կոչւած թաղերի վրայ և գործում Մեծ-Ոճրագործի ցանկութեան վայել ամեն տեսակ խժդժութիւն, սպանութիւն և թալան:

Ամեն բան պարզում է քաղաքի հայերի համար. թշնամին որոշել է կոտորել, որքան կարող է...

Յեղափոխական խմբերը վճռում են դուրս գալ կուրի երեք կուսակցութեանց ներկայացուցիչները՝ կարճ խորհրդակցութիւնից յետոյ միանում են միահամուռ և համերաշխ ուժերով կուսերու թշնամու դէմ:

Ողջին ձեզ, ողջին ձեր յիշատակին, անմոռաց գործիչներ. մեր մղած անհաւասար կուրի յաջողութիւնը պահանջում է միացած, համերաշխ գործունէութիւն. կեանքի դառն փորձերը, ժողովրդի շահերի վրայ հիմնւած անողորմ իրականութիւնը բերեց ձեզ այդ եղբակացութեան: Թող այդ օրինակին հետևեն բոլորը, որոնք ներկայ պատմական ճգնաժամում ծառայում են հայրենիքի ազատութեան գաղափարին:

Կուրը, թշնամու կողմից զգալի ջարդով, տևում է 6 օր շարունակ. կուրոյներից այդ վեցօրեայ կուր ընթացքում ընկնում են 2 հօգի միայն մինչդեռ տաճիկների և քիւրդերի դիակների թիւը հասնում է 500-ից աւելի:

Տեսնելով հայերի այդ ահեղ դիմադրութիւնը, կառավարութիւնը Կրուպպի թնդանօթներով Ակոփայ քարերից սկսում է ումբակոծել քաղաքը, առաւելապէս Յայնկոսներ և Շան-թաղ կոչւած արուարձանները:

Ընդդիմադրութիւնը, որ այնքան զօրեղ կերպով արտայայտեց հայերի կողմից, ստիպեց կառավարութեան դիմելու իր աւանդական նենգ քաղաքականութեան. իսկ ներկայումս նա կարող էր օգտուել տէրութեանց ներկայացուցիչներից, որոնք այնքան ստոր դեր կատարեցին Վանայ մէջ:

Շաբաթ, յունիսի 8-ին, արտակարգ ժողով է կայանում, ուր դիպլոմատիայի ներկայացուցիչների հետ մասնակցում են և երեք կուսակցութեանց ներկայացուցիչները:

Եթէ հայ զինուորները չհեռանան քաղաքից, երկրորդ օրը պիտի ումբակոծւի քաղաքը. սրածութեան պիտի ենթարկւին բոլորը, առանց խնայելու հասակը և սեռը. — հա այս է լինում հիւպատոսների միջոցով կառավարութեան ուլտիմատումը: Հիւպատոսները երաշխաւորում են քաղաքը պահպանել, եթէ յեղափոխականները կատարեն կառավարութեան պահանջը: Արդեօք այս էր միայն, թէ ունէին և ուրիշ շարժառիթներ, յայտնի չէ, — միայն այն օրը հրահանգ է տրւում

երեք կուսակցութեանց ղինւորներին պատրաստել թողնելու քաղաքը:

Բայ կայ արդեօք որ և է զանազանութիւն այժմեան Եւրոպայի և տաճիկ կառավարութեան մէջ:

Յունիսի 8-ի գիշերը Աւրագ լեռը ապաստանում են Հազարաւոր փախտական բազմութիւն՝ 4-500 ղինւած Հայեր, մնացածները անզէն, որոնք կազմում էին քաղաքից փախածները և շրջակայ գիւղացիները ընտանիքներով:

Կառավարութիւնը ոչ մի արգելք չէ դնում ղինւած խմբերի հետանալուն: Մեծ-Ոճրագործը ջլատել էր ոյժերը, մասամբ հասել իր նպատակին. քաղաքում նա առանց որ և է դիմադրութեան կը գործադէր կոտորածը, իսկ ղինւած խմբերի հետ գործ ունենալը կը յանձնէր սահմանադրի վրայ թափուած զօրքերին և համիրիէ գնդերին:

Այդտեղ է ահա տաճիկ կառավարութեան ձեռք բերած յաջողութիւնը և յեղափոխականների գործած մեծ սխալը. բայց քանի որ մեզ պակասում են ճիշտ տեղեկութիւններ քաղաքը թողնելու իսկական պատճառների մասին, թողնենք այդ ապագայի լուսաբանութեան:

Եթութեան մէջ է մնում մեզ համար և այն, թէ ինչու ղինւած խմբերը Աւրագից բաժանուած կն՝ ընտրելով բոլորովին տարբեր ձանապարհներ:

Մ. Աւետիսեանի առաջնորդութեամբ վանեցիների մի խումբ՝ բաղկացած 200 ղինւած և 800-1000 անզէն մարդկանցից—չարժուում է Հայոց-Չորի, Աղբակի վրայով անցնելու Պարսկաստան:

Գաշնակցութեան խումբը բաղկացած 125 ղինւած երիտասարդներից, վճռում է երկու մասի բաժանել. մէկ մասը մնում է երկրում, իսկ միւս մասը 58 հոգուց բաղկացած՝ Պետոի առաջնորդութեամբ ուղղում է դէպի Պարսկաստան (Աւրդանը իր խմբով այդ ժամանակ լինում է Շատախում): Պետոի խմբին միանում են և հնչակեանները: 25 հոգով:

Այդ 83 հոգուց բաղկացած միացեալ խումբը ուղևորում է Սալախանէի գծով:

Հեռեանքը արդէն յայտնի է հեռագիրներից.

Վանը յունիս 11-ին նորից ենթարկւում է սոսկալի ջարդի, ընկնում են հազարաւոր գիակներ, այրւում են հայերի թաղերը, տները. ժողովուրդը մնում է անօթի, մերկ, սուգի մէջ ընկղմած. իսկ ղինւած խմբերին, ասենք տաճիկական պաշտօնական բառերով «ցըրւում են քիւրդերը»:

Արմենական խումբը, Վանից մի քանի ժամ հետո նոր-գիւղից սկսած, անընդհատ ընդհարումներով անցնում է առաջ: Շատերը ղինւածներից, մանաւանդ անզէններից ցրւում են գիւղերը կամ վերադառնում քաղաք. աւելի ճիշդն ասած՝ կոտորւում են զատ-զատ: Խումբը զօրեղ ընդհարումներ է ունենում Ծաղկաձորում, Չուխում և վերջնականապէս շարժւում է Աղբակի Բարդուղիմէոս Առաքեալ վանքի շրջակայքում, ուր ընկնում են մինչև 500 հոգի: Այդ ահագին բազմութիւնից ազատւում են հազիւ 30 հոգի:

Պետոի և Մարտիկի խումբերը Սալախանէ կոչւած աւանի մօտ՝ Գարահիսար լեռան վրայ կուր են թռնում բազմաթիւ զօրքերի և քրդերի հետ ևամբողջ օրւայ սոսկալի կուրից յետոյ ամենքը շարժւում են, ազատւում

է միայն մի մարդ:

Երկու խմբերը ևս մեծ նեղութիւն են կրում պաշարի կողմից, ոչ մի օգնութեան կամ ուստաս ստանալու յոյսեր չէին կարող ունենալ:

«Խոտ էինք ուտում կուրեիս, քաղցից մեր ձեռքերը անզօր էին հրացան բռնելու» — ահա ինչ է ասում միակ ազատածը

Ն Ա Մ Ա Կ Կ Ա Ր Ի Ն Ի Ց

14/26 մայիս 96 թ.

Քաղաքում իրերի դրութեան մէջ վերջին 6-7 օրւայ ընթացքում յանկարծական փոփոխութիւն է նկատւում. կառավարութեան ղինւորական մասը կատարեալ շարժման մէջ է, առանձին ուշադրութիւն է դարձրած քաղաքի շրջակայ ամրութիւնների վրայ, որտեղ գործ է դրւում կարգին և արթուն հսկողութիւն. այդ տեղերում աւելացրին ղինւորների թիւը և բաժանեցին բաւականաչափ ռազմամթերք. նոյն բանը արին նաև քաղաքի մէջ գտնուող ղինւորների համար: Ամրութիւնների զօրքը դիշեր և ցերեկ ղինւած դրութեան մէջ է սպասում. քաղաքի դռների մօտ մարդկանց մանրամասն հարցուփորձի են ենթարկում, պարզ ցոյց է տրւում, որ կառավարութիւնը երկիւղ է կրում քաղաքի վրայ յարձակումից: Այս հանգամանքը առաջ է եկել ինչպէս երևում է իմ ստացած հաւատարմ տեղեկութիւններից, Կարսի թիւրքաց հիւպատոսի այստեղի նահանգական իշխանութեան ուղղած մի հեռագրից, որի համաձայն իբր թէ Ալէքսանդրապօլի և Կարսի շրջանների հայերը ղինւած հաւաքել են սահմանի վրայ և կամենում են արշաւանք գործել ներս: Կառավարութիւնը հաւատացած է, որ մի քանի խմբեր արդէն անցել և մտել են մաս առ մաս (3-4-ով) քաղաք, նպատակ ունենալով մի որոշ ժամանակ թէ դրսից և թէ ներսից սկսել ղալմաղալ և յարձակում: Շատերը թիւրքերից պնդում են, որ ոռուսաց կառավարութեան թողուցութեամբ է կատարւում այդ բոլորը, որպէսզի խառնակութիւններից օգուելով կարողանայ երկիրը գրաւել: Ինչ որ էլ լինի՝ փաստը նըրանումն է, որ կառավարութիւնը ջանփէտայիններից շան պէս վախենում է: Տեղի ունեցող պատրաստութիւնների և հսկողութեան պատճառով, նկատւում է ներքին յուզումներ թիւրք անմիտ ամբօխի մէջ, որը տրամադիր է նոր կոտորած սարքել քաղաքում, եթէ տեղի ունենան յեղափոխականների արշաւանքները:

Կառավարութիւնը այս վերջին մի ամուլայ ընթացքում գտնւում է տնտեսական ամենալուրջ և ծանր տագնապի մէջ: Զինւորները հասել են կատարեալ քաղցածութեան. բայրամի առիթով անգամ ոսծիկ չբաժնուց:

Ասում են, որ իբր թէ դէպի Ալաշկերտ և Պայագէտ նոյնպէս ուղարկւած են զօրք և ռազմամթերք:

Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ զօրքերի տեղափոխութիւնը քաղաքից դուրս կատարւում է գիշեր ժամանակ և շատ անգամ անուղղակի

Ճանապարհներով: Շաբիր և Ջէքի (Գ. զօրաբանակի Տրամանատարը) փաշաները մի լուրի համաձայն, միասին գալիս են Կարին: Թէ ինչ բանի համար, չէ իմացուով դեռ: Սպաներին քաղաքի դռներինց դուրս գալ արգելուով է՝ առանց բարձրագոյն Տրամանի:

Ընդհանրապէս վերառած, կառավարութիւնը իւր ներկայ զինուորական ուժով կազմ ու պատրաստ վիճակի մէջ է:

Ե Ր Չ Ն Կ Ա Յ Ի Յ

Սրանից մի քանի տարի առաջ երբ Եկեղեցաց գաւառին մէջ «Դաշնակցութեան» կոմիտէն կազմակերպեցաւ, տեղւոյն երիտասարդութիւնը վառ եռանդով սկսաւ մեզ աջակցել: Ժողովուրդեան աղքատ թէ արհեստաւոր մասն իր փոքրիկ նւէրներով կը նպաստէր մեզ, միայն հարուստ «աղաներու» դասն էր որ լռիկ դիտում էր. հակառակ մեր խնդիրներու, սպառնական դիմումներու, միշտ անտարբեր մնացին մեր սկսած Սուրբ գործին և մինչև վերջն էլ այդ իրենց «աղայական» յամառութիւնը շարունակեցին մեզ դէմ, զլացան իրենց լուսն Ժողովուրդեան Սուրբ գործոյն. այն Ժողովուրդեան, որու ճակտի քրտանց արդիւնքով իրենց ամբողջ հարստութիւնը դիզած էին:

Այդ հարուստներու մեզ չնպաստելովը, մենք գործելէ չզրադրեցանք. շարունակեցինք մեր սկսած գործը, սա համոզմամբ թէ «ուր կամք կայ հոն անկարելիութիւն չկայ»: Ժողովուրդեան աղքատ ու արհեստաւոր դասակարգը մեծամասնութիւն կը կազմէր, արդէն նրանց համակրութիւնը վայելած էինք և դրանց նպաստներով օրապահիկէ կտրելով մեզ տրւած նպաստներով, վերջապէս կարողացանք մեր առաջին շրջանին մէջ ունենալ մեր հայրուկային խումբը՝ խմբապետութեամբ Քեռիի, որ կառավարութիւնը սրտմտեցուց, սարսափեցուց, վանքերու ու հայ գիւղերու պաշտպան կեցաւ քիւրդերու առօրեայ յարձակումների դէմ: Եւ ամենէն վերջը խումբն ունեցաւ 1895 թիւ օգոստոս 9-ին Կամախի նշանաւոր ընդհարումը կառավարութեան 400 կանոնաւոր զօրքի, 4 լեւնային թնդանօթի և 1000-ի մօտ պաշնպօզուկների դէմ, պատերազմի դաշտին վրայ թողուվ երկու նահատակ միայն, մինչդեռ թշնամուն զոհն էր 50-60 զօրք և նոյնքան էլ վիրաւոր:

Ահա այդ մեր յամառ հարուստների այժմեան վիճակը. 1895 հոկտեմբեր ամսուց սարսափելի կոտորածէն ի վեր Երզնկայի բանտին մէջ կը հեծեն, զրկւած իրենց կարողութենէն, ամեն բանէ և դատապարտւած 15-101 տարւան բանտարկութեան ու բերդարգելութեան: Գիտէք, ինչ ամբաստանութեամբ: Մէկը ամբաստանած են ըսելով, թէ դուք խումբին օգնեք էք, միւսին՝ զէնք տւած էք, ուրիշն մը՝ խումբին տղոցը զգնես չէնել տւած էք. մեկային ալ թէ՛ ինչո՞ւ 10 տարիէ ի վեր խմբապետին տանը վարձակալն էք և այն: Այո, կառավարութեան օրէնքով այդ 10-ի չափ հարուստները անմեղներ են իսկ հայ Ժողովուրդեան Սուրբ

գործի օրէնքով անբաւելի մեղապարտներ, զորս քաւելու են թարկւած են:

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր Կ Ի Լ Ի Կ Ի Ա Յ Ի Յ

25/6 ապրիլ 96 թ.

Մեռածների համար մի տրտմիք, եթէ մեր հիմակւան վիճակը գիտնայիք, մեռածներն բախտաւոր կը համարէիք... մի տրտմիք կըսեմ, քանզի ողջ մնացեալներու ոչ մէկուն առողջութեանը վրայ յոյս չկայ: Այժմ թէպէս ողջ ենք, բայց կեանքէն մահը քաղցր է, ասոր հաւատացէք: Նորանոր կոտորածներու համար կասկած չունիմ գրեթէ... Ականատես անձի մը վաւերական վկայութեան համեմատ՝ Երեսիոյ մէջ կարգով դնացեր են, միայն երկու հայր տուն աղատներ է, այն ալ մահէն: Երեսիոյ մէջ մարդու կորուստ 12,000 է կըսուի, 6000-էն պակաս ըսող քննիչ մը չեղաւ: Եթէ այստեղ և ուրիշ վայրեր ալ նոր դէպքեր լինին, այնպէս կը լինի, որ տուն առ տուն և դուռ առ դուռ կերթան, ոչ մի տեղ ապահովութիւն չկայ: Զենքերը ժողովցին: Այնթապի մէջ փողոցներու դռներն բանալ տւած և դռները հանած են. չտեսնողը չկրնար հաւատալ և ըմբռնել: Երեսիոյ մէջ տաճկացիներն անգամ ջարդեր են. Երեսիա, Մէվէրէկ, Ատրեաման կամ Հիւսնուսանուր, Մարաթիա, Կիւրիւն, Արաբկեր, Մարաշ, Ալշիա և շրջակայ գիւղերն փձացան բոլորովին: Պիրեճիք կողպաւելէն և ջարդուելէն վերջ՝ Նիզիա ալ ամբողջովին թրջացան. ասոնց ամենն ալ ոչ ուտելիք ունին, ոչ հագնելիք:

* *

2/14 ապրիլ 96 թ.

Առած հաւաստի լուրերու համաձայն Քէսապ, Քէպուսի, Պիթիաս, Եօղուն-օրդ և Երտըր-պէկ գիւղերէ (Սեւտիոյ հայաբնակ գիւղերն են) իւրաքանչիւրին մէջ այժմ 7-8 հարիւր զօրք մտած և բնակած է հայերու հաճութեամբ, առանց որ և իցէ հայոց կողմէն դիմադրութիւն լինելու:

Կառավարութիւնն իրեն յատուկ դժոխային բարբարոսութեամբ այդ գիւղերու ափ մը հայերն ալ բնաջինջ կընէր և կընէ, բայց անհասկանալի դիտաւորութեամբ մը սկզբէն ի վեր շարունակ կղզուշանայ այդ տեղ ալ ի գործ դնել սովորական վայրագութիւնները:

Քիլիսէն դեռ մանրամասնութիւն չկայ, զարմանալի բան, եւրոպական լրագիրք գրեթէ բան մը չեն գրեր այդ մասին, կը թւի թէ ձանձրացան խեղճ հայերու կոտորածներն արձանագրելէ և մելանն ու թուղթն ալ կը խնայեն, հայերը կարժե՞ն միթէ այդ չափ զոհողութիւն:

Ներսերէն առնւած լուրերը քստմեղի և սրտաձկնիկ են, դժոխոց ծնունդ սուլթանի տւած կոտորածները բաւ չեղան կարծես, հիմակ ալ թիփօս ու Եսպիլը քստմեղ և անխնայ կոտորել ողորմելի հայոց մնացորդն: Գօլքոբայի համար ալ մեծ երկնիւղ կայ ասն տեղի համար. սուլթանէն վերջ թիփօսն, թիփօսէն վերջ քօլիբանի

քրեորայէն վերջ ալ ի՞նչ համաճարակ... Զէյթունի մէջ անգլիական և Վարաշի մէջ ալ ֆրանսական հիւպատոսը թիֆօէ բռնուած են, որոնց համար ամերիկացի տօքթօր Շըփըրթ գնացած է Այնթապէն: Քրանսացի մի տեղակալ գնդապետ եկած է Վարաշ և Եփրատէ գալէ երթալու համար Քրանչեսկեան հայր Սալվարի սպանութեան մասին քննութիւններ կատարելու, իսկ հայերու համար ոչինչ...

* *

18/30 ապրիլ 96 թ.

ԱՅՆԹԱՊ.—Քաղաքիս արդի կացութիւնը առաջինէն տարբերութիւն չունի: Այն մարդիկ, որ խիստ կարօտ են, դուրս կելեն. մեծ մասը տան մէջ փակեալ են: Աղքատութիւն, թշուառութիւն և սնանկութիւն ընդհանուր է: Ժողովուրդը թէ փորձէ քանի մը օր շուկայ իջնել, թիւրքերը «ընտրում կայ» ըսելով կը փակցնեն. որով կտփուրիս նորէն 5-6 օր տան մէջ մնալ կրկին կիջնեն, նոյնը կը պատահի, դարձեալ կը փակին. շարունակ այսպէս ախ ու վախով օրերնիս կանցնի: Բոլոր շուկան և թաղերը զինւորներով շրջապատուած են, իբր թէ պաշտպանութեան համար, բայց ի՞նչ կը պաշտպանեն: 15 օր առաջ 60 քարահատ հայ կառավարութեան յորդօրանօք՝ քաղաքիս մտա քար կտրելու գնաց, տաճիկները ամեն ալ քաղաք դարձուցին սպառնալիքով և գործիքներն ալ յափշտակեցին: Քիլիսի մէջ դէպքի ատեն, 50 հոգի մեռած, 50 ալ անբժիշկ մը նալով մեռած են, 100-ի չափ ալ քաղաքէն դուրս այգիներուն մէջ սպանուած: Տանց կէսն և խանութներուն բոլորը, բացի Պէտէս թէնէն, կողոպտեցան:

Կառավարութիւնը 4 սպանեալ միայն կը ցուցնէ. շատ աշխատեքէ հայոց «մենք յարձակում ըրինք» ըսել տալու, բայց չէ յաջողած:

Բերիս (Հալէպ) գտնուող բանտարկելոց մէկ մասը ազատեցաւ, մնացածներու համար այնտեղի ռուսաց հիւպատոսը շատ աշխատած էր, յետոյ դեսպանէն յանդիմանագիր եկեր է անոր, որ չխառնուի: Քաղաքիս մէջ 5000 կարօտեալներ կան. մարդ գլուխ 60 փարա կը տրուի շաբաթը: Ամերիկացիք կը հոգան. Պատրիարքէն 100 ոսկի ստացած է սովեալներու համար:

Ալպիստան բոլորովին թրքացաւ. Էքպէս կաթօղիկ եղաւ. Ֆրանսական հիւպատոսը, 4000 ղուռ ստակով, Վարաշու գիւղացիներէն 1000 մարդ կաթօղիկ ըրաւ: Անտիոքի հայ գիւղերը զօրքով շրջապատեալ են. յեղափոխականներ կը պահանջին: Արդէն գիւղացիք անձնատուր եղած և Հալէք տարուած են:

Ն Ա Մ Ա Կ Վ Ա Ն Ի Յ

(ԳՐԱՍԻ ԿՈՂՈՅ ԱՌԱՋ)

Մենք, հայերս, որ կուրտուրապէս աւելի բարձր ենք, քան թէ մեր բնակակից կիսափայտերի ժողովուրդները, լուսաւորեալ աշխարհից պահանջում էինք մեր իրաւունքները՝ յանձն առած ամեն զօհաբերութիւններ: Այսօր բիւրաւոր զոհեր տալուց յետոյ, հակառակ մեր

յոյսերին, մոռացեցանք, արհամարհեցանք քաղաքակիրթ աշխարհից...

Սակայն թող Թիւրքիան Եւրոպայի այդ նախատինքը, չկարծէ թէ կոտորելով ջատեղով հայերս, կարող կը լինի խեղդել մեր մէջ ազատութեան ոգին, արդար բողոքի ձայնը. թող կեղտոտ դիպլոմատիան, քսան տարիէ ի վեր խաբելով մեզ և այսօր էլ իսպառ մոռացութեան տալով մեր հարցը, երբ այսքան բիւրաւոր զոհերի արեան մէջ թաթախուած է ինքը, չկարծէ թէ, վերջապէս պիտի յաջողի լքման դատապարտել հայ ժողովուրդը և ջնջել նրա անկապտելի իրաւունքները: Բալկանը իւր անմահ հերոսների փառքով խայտառակեց քանիցս Թիւրքիան՝ թօթելով նրա անտանելի լուծը, խայտառակեց անամօթ, անխիղճ դիպլոմատիան, ցոյց տալով՝ թէ որչափ մեղանշում էր նա մարդկութեան և արդարութեան դէմ, երբ պաշտպանում էր Թիւրքիոյ ամբողջութիւնը, նրա շահերն ի վնաս իրեն:

Դիպլոմատիան հաստատուած է ներկայ անարդարութեան և բռնութեան վրայ: Ապիտ ուժի օրէնք է դա, կամ լաւ ևս՝ նրա մարմնացումը: Մենք լաւ գիտենք, կոպիտ ոյժը միայն կարող է փոխել նրան, կարող է փշրել նրան, նա ամեն կերպարանք ստացող մի առասպելական գազան է, նրան պետք է խաղաղացնել...

Ազատութեան մէջ՝ քաղաքական և տնտեսական ազատութեան մէջ միայն կարող ենք ապրել, վայելել մարդկային իրաւունքները, ստանալ մեր բացարձակ պահանջները: Դրանց ձեռք բերելու համար, մենք մղում ենք մեր կռիւը, մղում ենք անընդհատ, կատաղի: Մեր դրօշակի վրայ ՄԱՀ կամ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ կայ գրած: Մենք չենք խաբել կեղծ ու պատիւր հաշտարար միջոցներով. մենք չենք կարող որ և է կերպով հաշտել թիւրք կառավարութեան հետ, քանի որ դա իր է ու թե ամբ թ շ ն ա մ ի է մ ե ը գ ո յ ու թ ե ա ն: Արեւի է մի առժամանակ լռենք, այդ նրա համար է, որ կըրնանք նորոգ, թարմ ուժերով վերստին շարունակել մեր կռիւը, մինչև բաւարարութիւն տրուի մեր իրաւացի պահանջներուն: Մեր կռիւը դոյութեան բնական կռիւ է, ազնիւ, նւիրական կռիւ է դա. դրա նահատակներին աստուածացնում ենք մենք: Մեզ համար սուրբ է նա, ով յանձն առած ամեն չարչարանք, մահ, վեհ դժգոհմանքով տոգորուած, ընկնում է մարտի դաշտում: Թիւրքիայի ճնշող լծին տակ մենք կը մեռնենք իբրև անասուն, բայց մենք վճռել ենք մեռնել իբրև մարդ: Իբրև հերոս ազատութեան և մեր յախտնական իրաւանց: Թող Թիւրքիան իր անարգ, քանդիչ զինւորներով, իր վայրագ քիւրդ հրոսակներով վատաբար կոտորէ մեր որդոց, մեր կանանց, մեր երեխաներին. թող նա այդ անմեղ զոհերի դիակները ծածկէ աւերակների փլատակաց տակ, այսպէս սոսկացնէ աշխարհս իր եղևնանագործութեամբ, մենք գիտենք կուրծք վեհանձնաբար, կուրծք միայն զինւորի հետ, և մեր զինւորաց սուրբ արիւնով ներկել Հայաստանը: Մենք ցնորքի չենք հետուում, ինչպէս բարբանջում են աշխարհիս լիրբ խաբեբաները, դիպլոմատները: Հայաստանը Հայաստան դարձնել. մեր հին, դարաւոր իրաւունքները վայելել մեր հողի վրայ, տարածել լոյս և քաղաքակրթութիւն, տալ հային և իր ինքնակոչ դրացիներին թիւրքին և քիւրդին մարդափայել կեանք, հանել նրանց արդի գազանային վիճակից, իլիկ նոցա ձեռքից յափշտակութեան

և չարութեան զէնքերը, Տիմեւել աղատ, ժողովրդական մի արդար կառավարութիւն, — ահա մեր նպատակը. այդ բարձր, նւիրական նպատակին հասնելու համար, մարտ ենք հրատարակել Թիւրքիայի դէմ: Տէրութիւնները թոյլ մնացին, անտարբեր աչք տեսան մեր աղէտները, սակայն մենք խորին գիտակցութեամբ, առանց երբէք լքանելու, շարունակում ենք մեր ժողովրդի պատմական կեանքը: Արդէն սկզբէն ի վեր պատերազմ է եղել անդու մի պատերազմ, մեր գոյութեան ոսոխների դէմ: Այսօր, թէև մեր ոյժերը շատ սկար են համեմատաբար և տիրող պայմանները համարեա բոլորովին աննպաստ, սակայն մենք մեր դրօշակը միշտ բարձր կը պահենք, կը յաղթենք և փառաւոր ապագայի կարծանանք, կամ թէ դիւցազնական մահով կաներևութանանք պատմական բեմից:

Յառաջ, քաղաքակրթութիւնը միշտ զոհ է պահանջել մարդկութիւնից. փառք է մեզ, եթէ նրա արժանաւոր զոհը լինինք:

Թ Ի Ի Բ Բ Ի Ո Յ Ե Ո Ի Բ Զ Ը

Դնչք չի կատարեցան Կրետէի մէջ Եւրոպայի յաւակնոտ քաղաքակրթութեան քմին տակ: Անոնց որ կաշխատէին Թերահաւատօրէն վերաբերելու Հայաստանի անլուր սարսափներու մասին, այժմ ամօթահար կերպով կը տեսնեն թէ ինչ է Թրքական կառավարութիւնը քաղաքակրթութեան անուն կրող սրտոտախնոս տէրութիւններուն հէք, անտիրական ժողովուրդներու նկատմամբ ցոյց տուած անասելի վարմունքը. կարծես ղիւսնազէտները հրճանք մը կզգան, երբ տեսնեն ժողովուրդներու հալածումը, կոտորումը, որով նիւթ կը մատակարարի իրենց քաղաքական խարդաւանամքներուն:

Եւրոպական թերթերու մէջ օրը օրին հրատարակող Թիւրքիոյ վերաբերեալ լուրերը սարսուռ կազմեն ամենէն սկիզբից մարդուն վրայ: Ոչ միայն Թիւրքիոյ զագագութիւններն են սակայն որ աչքի կը գարնեն, որոնք այլեւս ընթացիկ զործերու շարքը անցած են, այլ քաղաքակրթութեան անուն կրող սրտոտախնոս տէրութիւններուն հէք, անտիրական ժողովուրդներու նկատմամբ ցոյց տուած անասելի վարմունքը. կարծես ղիւսնազէտները հրճանք մը կզգան, երբ տեսնեն ժողովուրդներու հալածումը, կոտորումը, որով նիւթ կը մատակարարի իրենց քաղաքական խարդաւանամքներուն:

Կրետէի մէջ երաց վերջակը քնա փոփոխութիւն չէ կրած. ընդհակառակը, երթալով սուր կերպարանք կստանայ: Եթէ այսօր Կրետէն չունենար ասպտամբական հօտ ղիմադրութիւն մը, մանաւանդ եթէ Յունաստանը շատ մօտիկ չըլլար, այդ արգաւանդ կզգին սուլթանի կատարութեան սուշու արիւնտոտը ամայի դաշտի մը պիտի վերածուէր, Հայաստանի ճակատագրին նման. ասով մէկտեղ Թիւրքիոյ իրենց ծնաբէն կիւսած ոչ մէկ տմարդն միջոց կը ինային, մոսկովական քարքարոտութիւնը միացնելով եւրոպայի նենգամիտ քաղաքակրթութեան:

Դիտւած է, թէ Թիւրքերը Կրետէի մէջ երբէք խաղաղասիրական միջոցներու չեն դիմած. կը կառավարութիւնը մը ինքը զուրկ է քարոյական առաքնութիւնէ, ի՞նչպէս կարող է ժողովուրդները սիրաշահել, անոնց քարոզութիւնն չարժոյք զգալ: Թիւրքը խաղաղեցնել ըսելով կը հասկնայ ակերտ, թալանեւ, կոտորել. չէ՞ որ ամենէն խորին խաղաղութիւնը զերեզմանային լուծիւնն է: Երբ ամեն օր կը կարդանք Պոլսոյ լրագիրներուն մէջ, թէ կարգ մը վիւայէթներու մէջ շտրքիւ վն: սուլթանին խաղաղութիւն կը տրտէ, կը հասկնանք թէ մահւան լրիկ սուկերները միայն կը թափառին այդ ամայացած վայրերուն վրայ:

Կրետէի ներք զուրկ, վանքեր, սկիզբիցներ այլևս ու կողոպուտի մասնուած են. իսկ քահանայները ողջ-ողջ այլևս. մարդկային կեանքը ծանծի չափ արժէք չունի Թրքաց աչքին: Քրիստոնեաները իրենց կիները և երեխաները նաւերը լեցնելով կուղարկեն Յունաստան, ակներկ մահէն ազատուլու համար զանոնք: Որովհետև ոչ կնոջ կը ինային, ոչ արդար մանուկներուն: Իսկ ամատամքները իրենց ամուր լեռներուն վրայէն կը հարկածեն և ևս կը մղեն Թրքաց վայրագ զինուորները, որոնք իրենց պարտութեան վրէժը անմուռ, անպաշտպան գիւղացիներէն կանոնն:

Հնարակինի նահանգին մէջ Թիւրքերը վից քրիստոնեայ զիւր մուսուլման դարձուցած և սուկալի անգլութիւնները զործած են: Սուլթանը Պրուսայի կուսակալ Չիհնի փաշայի առաջնորդու-

թեամբ քննիչ յանձնախումբ մը դրկած է Կրետէ, որպէսզի հիւսաւտոններուն հետ համաձայնութեամբ քրիստոնեաները խաղաղութեան հրաւիրեն և անխտիր պատժեն ըրոր յանցարարները: Չարաբաստիկ սուլթանը կը խոստանայ նկատի առնել կրտսացիներուն պահանջները և ընդունիլ Հալեպայի Դաշնագրին մէջ ինչ ինչ բարեփոխումներ: Կրետէ թէ սուլթանը պատրաստեցրով կօրօրի:

Անգամ մը գրեցաւ թէ ցարը լսելով (ընդ նոր կը լսէ) Թիւրքիոյ քրիստոնէից, մանաւանդ կրտսացիներուն քաջամները, որոնք է ագրեցիկ ղիւր մը ըննել, բայց Լուսնով ևս կեցուցեր է զայն:

Նոյնպէս բաւական լուրջ Թիւրքեր գրեցին Եւրոպական համաձայնութեան մը մասին, բայց Ռուսիա թոյլ չտար սուլթանին վրայ ճնշում բանեցնելու:

Թերես «մարդասէր» Ռուսիան, կուզէ որ իր բարեկամը, զոնէ իր հոգեւարքին մէջ հանգիստ ննջէ: Թաղումը հնչու է կատարել:

«Տէլի նիւզին» կը գրեն, թէ քանի մը հարիւր ասպտամքներ յարձակեցան աւարող Թիւրքերուն վրայ, քնաչինը ըրին և անոնց օգնութեան հասնող զինուորները ևս մղեցին:

Ղիւսնական թերթ մը կը գրէ «Կրետէի մասին տէրութեանց միջու չէ կարող համաձայնութիւն զոյնալ: Ուրեմն կը մնայ սուլթանին և իր հպատակներուն կողմ շարունակել: Թիւրքիա պիտի ղեմէ ամենայնպէս միջոցներու, կարգը վերահաստատուելու համար, և ինչպէս Հայաստանի մէջ, հոս ալ պիտի յաղթէ նոյն եղանակով»:

Կրետէի հարցի մասին Պիսմարքի կարծիքը. «Կրետէի հարցը, կըսէ երկաթէ նախարարը (այժմ ժամգոտած), պարտէզիս մէկ հողի կողմին չափ չի շահագրգռեր զիս»: Եւ իբր արդարացում իր այդ լրբնի համարձակութեան վկայութիւն կը բերէ Պոլոս առաքեալի խօսքերը, թէ «Կրետացիները ստախօս են, ծոյլ և շարածճիներ են. ուստի խիստ կերպով պատժեցէք զանոնք, որպէսզի ամուր մասն իրենց օրէնքին մէջ:

Այդ քաւթարը ամբողջ Հայաստանն ալ գերման զինուորի մը ուկորներուն հետ չէր փոխեր:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ռ Թ Ի Ր Ն Ե Ր Ի Ց Ի Ց Ա Յ Ա Ը

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան կեդրոնական սնդուկի մէջ ստացւած են.

«Ապառաժ» քաղաքից. — Մէլիքներ 50 ռուբ., Նոր լոյս 65 ռուբ., Սուսան 22 ռուբ., Դ. գիւղից Ա. Շ. ձեռքով 13 ռուբ. 10 կոպէկ և Ոյժ խմբից 1400 փամփուշտ:

Օդ. քաղ-ից 804 ռուբ. 58 կոպէկ, Ոմն Մ. Բ. 100 ռուբլի:

Բօլք. Եամպօլ քաղ. կօմիտէից 440 Ֆրանկ:

Ամերիկա. — Ուէստ-Վէյմութ ք.-ց Հ. ՕՏ-ից 1 դոլ.:

Նաւահանգստի կասսայում ստացւած են.

Ժողովարարութիւնից 780 ռուբլի, «Ճորոխ» խմբից 81 ռուբ. 20 կոպէկ:

Հուր քաղ-ից Մանուկի միջոցով 11 ռուբ. 25 կոպ.,

Կարապետի միջոցով 42 ռուբ., Պեկօի միջոցով 30 ռուբ.,

Շիրիքի միջոցով 28 ռուբ., Օ-ի միջոցով 195 ռուբ., 35 կոպէկ:

Սխ. քաղ-ից. — Արօրից 50 ռուբ., Արեւանք 75 ռուբ., Համակրող ծերունի մը 60 ռուբ.:

Մի ազգասէրից ստացւած է մի հրացան և 30 փամփուշտ, Արամից մի վեցհարածեան և 25 փամփուշտ: Գլթ.-ից 30-72:

Դէվոէժի Արիսոսկրատից 100 Ֆրանկ:

Պայթուցիկի մէկ բեկորից 12 Ֆրանկ:

Դաշնակցութեան անձամբօթներից խնդրում է թղթակցութեան և ներատուութեան համար ղիմել.

Armene-Gaspar, poste restante, Carouge (Suisse)

Վիեննա, Դաշնակցութեան աղատ տպարան.